Հավելված N 4
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 26-ի N 774 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՀԱՅՏԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են արդյունաբերական դիզայնի հայտի ձևակերպման և ներկայացման, դրա նախնական և ըստ էության փորձաքննությունների անցկացման, զատման, դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու, ինչպես նաև դրանում փոփոխություններ կատարելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործված են «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված հասկացությունները:

2. ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ԵՎ ԴԻՄՈՒՄԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Արդյունաբերական դիզայնի պետական գրանցումն իրականացվում է հայտի հիման վրա, որը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ է (այսուհետ՝ Գրասենյակ) ներկայացվում հայտատուի անունից թղթային կրիչի վրա կամ հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի միջոցով (էլեկտրոնային եղանակով):

4. Հայտը ներկայացնում է հայտատուն՝ անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն հայտը ներառում է՝ արտոնագիր ստանալու մասին դիմում (այսուհետ՝ դիմում)՝ համաձայն սույն կարգով սահմանված N 1 ձևին համապատասխան, այլ փաստաթղթեր ու տեղեկություններ:

Դիմումը և մյուս փաստաթղթերը ներկայացվում են հայերեն: Հայտի մյուս փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև այլ լեզվով: Այս դեպքում դրանց հայերեն թարգմանությունը

ներկայացվում է հայտը ներկայացնելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում: Սահմանված ժամկետում հայտի փաստաթղթերի թարգմանությունը Գրասենյակ չներկայացնելու դեպքում հայտը համարվում է հետկանչված, որի մասին ծանուցվում է հայտատուն:

5. Դիմումը լրացվում է հետևյալ կարգով՝

1) Դիմումի 1-ին սյունակը նախատեսված է Գրասենյակի կողմից լրացնելու համար և հայտատուի կողմից չի լրացվում:

2) Դիմումի 2-րդ սյունակի «Եվրասիական հայտի համարը և ներկայացման թվականը» դաշտում (լրացվում է օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքում) բերվում են եվրասիական հայտի համարը և ներկայացման թվականը, իսկ «Եվրասիական հայտի հրապարակման համարը և թվականը» դաշտում (լրացվում է օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքում) բերվում են եվրասիական հայտի միջազգային հրապարակման համարը և թվականը:

3) դիմումի 3-րդ սյունակի (51) ծածկագրով դաշտում բերվում են հայտարկվող արդյունաբերական դիզայնի ԱԴՄԴ (Արդյունաբերական դիզայնի միջազգային դասակարգում) համապատասխան կոդ(ը)(երը) և (54) ծածկագրով դաշտում՝ արդյունաբերական դիզայնի անվանումը:

4) Դիմումի 4-րդ սյունակի (71) ծածկագրով «Հայտատու (ներ)» դաշտում տրվում են տեղեկություններ հայտատուի մասին.

ա. Եթե հայտատուն ֆիզիկական անձ է, ապա լրացվում է անունը, հայրանունը (առկայության դեպքում) և ազգանունը, բնակության վայրը (հասցեն) և այն երկրի պաշտոնական անանվանումը, որի քաղաքացին է կամ որտեղ ունի մշտական բնակության վայր, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, երկրի երկտառ ծածկագիրը ըստ ՄՄՀԿ ST.3 ստանդարտի, եթե այն սահմանված է:

բ. Եթե հայտատուն անհատ ձեռնարկատեր է, ապա լրացվում է նրա անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում) (անհատ ձեռնարկատեր նշմամբ) (համաձայն ամիատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վկայականի), հաշվառման վայրը (համաձայն անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վկայականի) և երկրի պաշտոնական անվանումը,

հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, երկրի երկտառ ծածկագիրը ըստ ՄՍՀԿ ST.3 ստանդարտի, եթե այն սահմանված է:

գ. Եթե հայտատուն կազմակերպություն է, ապա լրացվում է նրա անվանումը (համաձայն իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի), գտնվելու վայրը (համաձայն իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի) և երկրի պաշտոնական անվանումը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, երկրի երկտառ ծածկագիրը ըստ ՄՍՀԿ ST.3 ստանդարտի, եթե այն սահմանված է:

դ. Եթե հայտատուները մի քանիսն են, նշված տեղեկությունները լրացվում են նրանցից յուրաքանչյուրի համար:

5) Եթե հայտատուն(երը) նաև հեղինակ(ներ) է(են), ապա նրա(նց) բնակության վայրի մասին տեղեկություն(ներ)ը տրվում է(են) միայն (72) ծածկագրով «Հեղինակ(ներ)» դաշտում:

6) Դիմումի 5-րդ սյունակի՝

ա. (72) ծածկագրով «Հեղինակ (ներ)» դաշտում նշվում են տեղեկություններ արդյունաբերական դիզայնի հեղինակի (հեղինակների) մասին՝ անունը, հայրանունը (առկայության դեպքում) և ազգանունը, հասցեն, որը ներառում է երկրի պաշտոնական անվանումը, որի քաղաքացին է կամ որտեղ ունի մշտական բնակության վայր, երկրի ծածկագիրն ըստ ՄՍՀԿ ST.3 ստանդարտի, եթե այն սահմանված է:

բ. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն հեղինակն իրավունք ունի հրաժարվելու իր անունը հայտում նշելուց: «Խնդրում եմ (ենք) արդյունաբերական դիզայնի հայտում կամ արդյունաբերական դիզայնի մասին հրապարակվող տեղեկություններում չհիշատակել ինձ(մեզ) որպես հեղինակ (ներ)» դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ հեղինակը հրաժարվում է նշված լինելու իրավունքից: Այստեղ նշվում է միայն այն հեղինակի անունը, հայրանունը (եթե այն նշված է) և ազգանունը, ով ցանկանում է հրապարակման ժամանակ չհիշատակվել որպես հեղինակ, և նրա ստորագրությունը:

գ. «Հեղինակի իրավահաջորդը, որը հայտատուին փոխանցել է արտոնագիր ստանալու իրավունքը (նշվում է անունը, ազգանունը կամ անվանումը, հասցեն և երկրի կոդը, ստորագրությունը, թվականը)» դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ հայտ ներկայացնելու և արտոնագիր ստանալու իրավունքը հայտատուին փոխանցվել է հեղինակի իրավահաջորդի կողմից: Այստեղ

նշվում են տեղեկություններ իրավահաջորդի մասին՝ անունը, հայրանունը (եթե այն նշված է), ազգանունը և բնակության վայրը (հասցեն՝ ֆիզիկական անձի համար), անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում) (անհատ ձեռնարկատեր նշումով) և հաշվառման վայրը (անհատ ձեռնարկատիրոջ համար) կամ կազմակերպության (իրավաբանական անձի) լրիվ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) և երկրի կոդը: Եթե հեղինակի իրավահաջորդը կազմակերպություն է, նշված դաշտում դրվում է ղեկավարի ստորագրությունը:

7) Դիմումի 6-րդ սյունակի 74-րդ ծածկագրով դաշտում նշվում են տեղեկություններ հայտատուի ներկայացուցչի մասին՝ անվանումը կամ անունը, հայրանունը (առկայության դեպքում) և ազգանունը, գտնվելու վայրը (հասցեն) Հայաստանի Հանրապետության տարածքում, հեռախոսի համարը և էլեկտրոնային փոստի հասցեն: Ներկայացուցիչը կարող է լինել արտոնագրային հավատարմատարը, ընդհանուր ներկայացուցիչը (հայտատուներից մեկը) կամ այլ ներկայացուցիչ: Այս դեպքում «X» նշանով նշվում է համապատասխան վանդակը: Ներկայացուցչի լիազորագիր ներկայացնելու մասին տեղեկությունը տրվում է համապատասխան վանդակում նշում կատարելու միջոցով:

8) Դիմումի 7-րդ սյունակի «Հասցե նամակագրության համար (փոստային հասցեն, հասցեատիրոջ անունը, ազգանունը կամ անվանումը)» դաշտում նշվում են լրիվ փոստային հասցեն Հայաստանի Հանրապետության տարածքում և հասցեատիրոջ անունը կամ անվանումը, որոնք պետք է բավարարեն փոստային առաքման պահանջներին, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն): Որպես նամակագրության հասցե կարող են նշվել, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում հայտատուի բնակության վայրի (ֆիզիկական անձի դեպքում), հաշվառման վայրի (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում) կամ գտնվելու վայրի (իրավաբանական անձի դեպքում) հասցեն, կամ արտոնագրային հավատարմատարի կամ այլ ներկայացուցչի հասցեն: Եթե դիմումում բացակայում է նամակագրության հասցեն և նշված չէ «Խնդրում եմ (ենք) նամակագրությունը վարել հայտատուի ներկայացուցչի հասցեով» վանդակը, ապա որպես նամակագրության հասցե համարվում է արտոնագրային հավատարմատարի կամ այլ ներկայացուցչի հասցեն, եթե այն նշված է, հակառակ դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու կամ գտնվելու վայր ունեցող հայտատուի հասցեն (եթե հայտատուները մի քանիսն են, նրանցից առաջինի հասցեն):

9) Դիմումի 8-րդ սյունակի «Ծանուցումների ստացման նախընտրած եղանակը» դաշտում նշվում են տեղեկություններ հայտատուի հետ կապ հաստատելու մասին՝ նշելով համապատասխան վանդակը: Եթե հայտատուն չի ընտրում ծանուցումների ստացման իր նախընտրած եղանակը, ապա Գրասենյակը ծանուցումներն ուղարկում է օրենքով սահմանված եղանակներից որևէ մեկով:

10) Դիմումի 9-րդ սյունակը նախատեսված է առաջնություն խնդրարկելու մասին նշում կատարելու համար և լրացվում է միայն այն դեպքում, երբ խնդրարկվում է ավելի վաղ առաջնություն, քան հայտի ներկայացման թվականն է: Այս դեպքում համապատասխան վանդակում կատարվում է նշում և նշվում են առաջնության խնդրարկման հիմքերը: (31)-րդ ծածկագրերով դաշտում նշվում է առաջին հայտի համարը, որի հիման վրա խնդրարկվում է առաջնությունը, (32)-ում՝ առաջին հայտի ներկայացման թվականը, (33)-ում՝ առաջին հայտի ներկայացման երկրի ծածկագիրը ըստ ՄՍՀԿ ST.3 ստանդարտի կամ, եթե առաջնությունը խնդրարկվում է որևէ տարածաշրջանային կազմակերպություն ներկայացրած հայտը ներկայացնելու թվականով, նշվում է տվյալ կազմակերպության երկտառ ծածկագիրը, օրինակ՝ Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների Բենիլյուքսի կազմակերպություն (BX), Եվրամիության մտավոր սեփականության գրասենյակ (EM): Եթե առաջնությունը խնդրարկվում է մի քանի հայտերի հիման վրա, ապա նշվում են բոլոր հայտերի սույն կետում նշված տվյալները:

11) Եթե խնդրարկվում է ցուցահանդեսային առաջնություն, ապա (23) ծածկագրերով դաշտում նշվում է ցուցահանդեսում այդ օբյեկտի ցուցադրման առաջին օրը:

12) Դիմումի 10-րդ դաշտի «Կցվող փաստաթղթերի ցանկը» սյունակի համապատասխան վանդակները լրացվում են «X» նշանով՝ նշելով յուրաքանչյուր ներկայացվող փաստաթղթի թերթերի քանակը մեկ օրինակում և օրինակների քանակը:

13) Դիմումի 11-րդ սյունակի համապատասխան վանդակներում «X» նշանը դրվում է այն դեպքում երբ հայտատուն, խնդրում է արդյունաբերական դիզայնի հայտի հրապարակումը հետաձգել ոչ ավելի, քան մինչև հայտը ներկայացնելու թվականից վեց ամիս լրանալը:

14) Դիմումի 12-րդ սյունակում լրացվում են դրա ստորագրմանը վերաբերող տվյալներ: Դիմումը ստորագրում է հայտատուն կամ նրա ներկայացուցիչը՝ նշելով ստորագրման թվականը: Ստորագրությունը վերծանվում է՝ ստորագրող անձի անվան սկզբնատառի և ազգանվան նշումով: Եթե հայտատուն կազմակերպություն (իրավաբանական անձ) է, ապա դիմումը

ստորագրում է դրա ղեկավարը կամ կազմակերպության կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձ՝ նշելով պաշտոնը:

15) Եթե որևէ տեղեկություն ամբողջությամբ չի տեղավորվում դիմումի համապատասխան սյունակում, ապա այդ տեղեկությունը նույն ձևով ներկայացվում է լրացուցիչ թերթի վրա՝ դիմումի համապատասխան սյունակում նշելով՝ «տե՛ս լրացուցիչ թերթի վրա», կամ «տեղեկությունները ներկայացված են լրացուցիչ թերթի վրա»: Եթե ստորագրություններ պահանջող այս կամ այն տեղեկությունը ներկայացվում է լրացուցիչ թերթի վրա, այն ստորագրում են նույն կարգով: Հայտատուի կամ նրա ներկայացուցչի ստորագրությունը պարտադիր է դիմումի յուրաքանչյուր լրացուցիչ թերթի վրա:

6. Դիմումը և ներկայացվող նյութերը պետք է զերծ լինեն ջնջումներից, ուղղումներից, ձեռագիր մակագրություններից:

7. Թղթային կրիչի վրա ներկայացված դիմումը և բոլոր փաստաթղթերը (բացի պատկերներից) ներկայացվում են տպագրված՝ 210x297 մմ ձևաչափի (A4) որակյալ, սպիտակ թղթի վրա: Պատկեր-ների ձևաչափն ընտրվում է այնպես, որ այն չգերազանցի հայտի փաստաթղթերի թերթերի սահմանված չափերը: Փոքր ձևաչափի պատկերները ներկայացվում են թղթի թերթերի վրա սոսնձված՝ պահպանելով թերթի ձևաչափի և որակի նկատմամբ սահմանված պահանջները:

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՊԱՏԿԵՐԸ

8. Պատկերը իրի արտաքին տեսքն արտահայտող փաստաթուղթ է, որը պարունակում է դրա մասին պատկերային տեղեկություն և թույլ է տալիս որոշել դրա իրավական պահպանության ծավալը:

9. Պատկերը պետք է մանրամասն և լրիվ պատկերացում տա իրի արտաքին տեսքի մասին: Պատկերը ներկայացվում է գրաֆիկական նկարի, ներառյալ՝ համակարգչային գրաֆիկայի կամ լուսանկարների տեսքով՝ կատարված սև-սպիտակ (եթե գույնը էական չէ) կամ գունավոր:

10. Պատկերները պետք է համապատասխանեն հետևալ պայմաններին՝

1) Պատկերը պետք է լինի հստակ և պարզ, վերարտադրված չեզոք հիմնագույնի (ֆոնի) վրա, առանց ստվերների, օտար առարկաների: Արդյունաբերական դիզայնի բոլոր մանրամասները պետք է լավ երևան:

2) Իրը կարող է ներկայացվել մեկ կամ մի քանի դիրքերով կամ տարբեր անկյունների տակ (տեսքը աջից, ձախից, առջևից, հետևից, վերևից, ներքևից և այլն)։ Յուրաքանչյուր տեսք համարակալվում է արաբական թվերով՝ առանձնացված կետով, ընդ որում, առաջին թիվը նշում է արդյունաբերական դիզայնի տարբերակի համարը, իսկ երկրորդը՝ տեսքի համարը (օրինակ՝ 1.1, 1.2 և այլն)։

3) Միևնույն արդյունաբերական դիզայնի բոլոր տեսքերը պետք է տրվեն նույն մասշտաբով։ Եթե պահանջվում է որոշ էական հատվածների լրացուցիչ ներկայացումը, թույլատրվում է դրանց պատկերումը մեծացված մասշտաբով։

4) Եթե արդյունաբերական դիզայնի հայտը պարունակում է տարբերակներ, ապա յուրաքանչյուր տարբերակը ներկայացվում է պատկերների լրակազմով՝ բոլոր անհրաժեշտ տեսքերով (ոչ մեծ իրերը կարող են պատկերվել միասին՝ ընդհանուր տեսքի պատկերի վրա)։

5) Հարթ (մակերեսային) արդյունաբերական դիզայնների համար ներկայացվում են դրանց (անհրաժեշտության դեպքում՝ գունավոր) պատկերները, որոնցում պետք է ընդգրկված լինի հարթ պատկերի կրկնանախշը (պլանում)։

6) Համալիր (բարդ) արդյունաբերական դիզայնների համար ընդհանուր տեսքի պատկերի վրա ներկայացվում է արդյունաբերական դիզայնի տեսքն ամբողջությամբ, այսինքն՝ դրա մեջ մտնող բոլոր իրերի ընդգրկմամբ։

7) Բացառիկ դեպքերում, եթե իրերը լրիվ կազմով չեն կարող ներկայացվել ընդհանուր տեսքի պատկերի վրա, թույլատրվում է լրակազմը ներկայացնել հատված առ հատված՝ առանձին պատկերների վրա։ Լրակազմի մեջ մտնող յուրաքանչյուր իր լրացուցիչ ներկայացվում է առանձին պատկերի վրա։

8) Իրի պատկերի վրա պահանջվում է կետագծի կիրառումը արտաքին տեսքի այն մասերը նշելու համար, որոնց նկատմամբ հայտատուն իրավական պահպանություն չի հավակնում։ Այս դեպքում իրի արտաքին տեսքի այն մասը, որին վերաբերում է հայտարկված արդյունաբերական դիզայնը, պետք է պատկերված լինի հոծ գծով։

9) Այն դեպքում, երբ արդյունաբերական դիզայնի գունագծանկարչական լուծումը էական է, կցվում է ընդհանուր տեսքի մեկ գունավոր պատկեր, սլայդ կամ գունային լուծման սխեման։

10) Փակվող, բացվող, ծալվող, ձևափոխվող և այլ իրերի համար կցվում են նաև դրանց պատկերները փակ, բաց (օրինակ՝ սառնարան, հեռախոսախցիկ) կամ հավաքված տեսքով (օրինակ՝ խոհանոցային կոմբայն, փոշեկուլ) տեսքով:

11) Պատկերներում տեսքերի քանակը պետք է որոշվի այնպես, որ դրանք սպառիչ պատկերացում տան արդյունաբերական դիզայնի գեղարվեստա-կառուցվածքային առանձնահատկությունների մասին:

12) Պատկերների չափերը կախված են իրի բարդությունից (սակայն փոքր կողմի չափը պետք է լինի 10 սմ-ից ոչ պակաս) և պետք է ընտրվեն այնպես, որ տեսանելի լինեն և լավ զանազանվեն մանրամասները: Պատկերների հակառակ երեսին հաջորդաբար, վերևից ներքև նշվում են պատկերի համարը, արդյունաբերական դիզայնի անվանումը և պարզաբանումները հետևյալ հաջորդականությամբ՝ ընդհանուր տեսք, այլ տեսքեր, գունավոր պատկեր:

13) Իրի, դրա մանրակերտի կամ գծանկարի պատկերները կարելի է փոխարինել դրանց որակյալ այլ արտապատկերումներով (օրինակ՝ լուսապատճենված):

14) Անհրաժեշտության դեպքում (փորձաքննության պահանջով), թեթև արդյունաբերության արտադրանքի համար հայտի նյութերի կազմում ներկայացվում է իրի արտադրության համար առաջարկվող կտորի, գործվածքի, կաշվի, օժանդակ նյութերի և պարագաների, զարդարանքների (և այլնի) դիզայնների լրակազմը (կոնֆեկցիոն քարտի տեսքով):

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

11. Արդյունաբերական դիզայնի անվանումը պետք է բնութագրի դրա նշանակությունը:

12. Քիչ հայտնի կամ նոր նշանակության արդյունաբերական դիզայնի անվանումը պետք է մատնանշի դրա օգտագործման բնագավառը (օրինակ՝ նոր սերնդի համակարգիչ):

13. Եթե արդյունաբերական 8իզայն ունի կատարման տարբերակներ, ապա անվանումից հետո տրվում է տարբերակների քանակը, օրինակ՝ «Շիշ (3 տարբերակ)»:

14. Եթե իրը ներկայացվում է բաղադրամասերի հետ, դա պետք է արտահայտված լինի անվանման մեջ (օրինակ՝ դանակ պատյանի հետ):

15. Եթե ներկայացված արդյունաբերական դիզայնը բարդ (համալիր) իր է, ապա դա պետք է արտացոլված լինի անվանման մեջ (օրինակ՝ գործիքների հավաքակազմ):

16. Արդյունաբերական դիզայնի անվանման մեջ խորհուրդ չի տրվում օգտագործել այնպիսի բառեր, անվանումներ կամ արտահայտություններ, որոնք չեն նպաստում դիզայնի անհատականացմանը (ինչպես, օրինակ՝ անձնանունները, մտերմիկ անվանումները, ապրանքային և սպասարկման նշանները, ապրանքների ծագման տեղանունները, աշխարհագրական նշումները, ֆիրմային և այլ հատուկ անվանումները և այլն):

5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

17. ԱԴՄԴ դասով (դասերով) որոշվում է հայտարկվող արդյունաբերական դիզայնի՝ ԱԴՄԴ գործող խմբագրության որոշակի խորագրին (խորագրերին) պատկանելը:

18. Դասակարգման ցուցիչը (ցուցիչները) ինչպես հայտատուի, այնպես էլ փորձագետի առաջարկությամբ կարող է (կարող են) ճշգրտվել և փոփոխվել փորձաքննության ընթացքում:

6. ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՄԻՋՈՑՈՎ

19. Ներկայացուցչի նշանակումը կատարվում է օրենքի 63-66-րդ հոդվածների համաձայն:

20. Հայտատուն կամ այլ շահագրգիռ անձը Գրասենյակի հետ գործավարությունը կարող է վարել ներկայացուցչի միջոցով, նրանց տված լիազորագրի հիման վրա:

21. Հայտատուն կարող է ներկայացուցիչ նշանակել հայտը ներկայացնելիս՝ հաշվի առնելով օրենքի 63-րդ հոդվածի պահանջները կամ դրա քննարկման ցանկացած փուլում՝ հայտի քննարկման ընթացքում:

22. Լիազորագիրը ստորագրվում է հայտատուի կողմից, կազմվում է գրավոր ազատ ձևով և չի պահանջում նոտարական վավերացում:

23. Եթե ներկայացուցչին նշանակում են մի քանի անձինք, ապա լիազորագիրը ստորագրվում է բոլոր անձանց կողմից:

24. Լիազորագիրը պետք է որոշի ներկայացուցչի լիազորությունների շրջանակը: Եթե դիմում է ներկայացվում հայտը հետ կանչելու, արդյունաբերական դիզայնի նկատմամբ իրավունքներից հրաժարվելու կամ ցանկացած այլ նույնական ընթացակարգ, որը նախատեսում է իրավունքների փոխանցում, ապա այդ ընթացակարգերը կարող են իրականացվել ներկայացուցչի միջոցով՝

միայն հատուկ տրված լիազորագրի հիման վրա, որտեղ հստակ նշված է հայտը հետ կանչելու, իրավունքներից հրաժարվելու կամ դրանք փոխանցելու հնարավորությունը:

25. Ներկայացուցչի ցանկացած գործողություն՝ նրան տրված լիազորությունների շրջանակներում, կամ նրա նկատմամբ Գրասենյակի ցանկացած գործողություն ունի նույն հետևանքները, ինչ հայտատուի գործողությունը կամ հայտատուի նկատմամբ կատարված գործողությունը:

26. Ներկայացուցչությունը վավերական է մինչև լիազորագրում նշված լիազորությունների սպառումը կամ դրա գործողության ժամկետի ավարտը: Լիազորագրով տրված լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են հայտատուի կամ նրա իրավահաջորդի կողմից Գրասենյակ ներկայացված դիմումի համաձայն (լիազորագրի վերացում):

27. Եթե մեկ հայտում նշված են մի քանի հայտատու, ապա նրանցից յուրաքանչյուրն իրավունք ունի գործերը վարելու Գրասենյակի հետ, սակայն նրանք կամ բոլորը միասին պետք է ստորագրեն հայտատուի ստորագրությունը պահանջող յուրաքանչյուր փաստաթուղթ, կամ հայտատուների կազմից պետք է նշանակեն ընդհանուր ներկայացուցիչ, կամ էլ պետք է նշանակեն այլ ներկայացուցիչ: Այս դրույթը տարածվում է նաև այլ շահագրգիռ անձանց վրա, որոնք վարում են գործերը Գրասենյակում:

28. Արտոնագրային հավատարմատարի լիազորությունները հաստատող փաստաթղթի (լիազորագրի) բնօրինակը ներկայացվում է նրա հայեցողությամբ, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

1) հայտի քննարկման փուլում նոր ներկայացուցիչ նշանակվելու,

2) հայտի հետկանչման մասին դիմում կամ առաջնության իրավունքից հրաժարման մասին դիմում ներկայացնելու,

3) արդյունաբերական դիզայնի արտոնագիր ստանալու իրավունքի փոխանցման մասին դիմում կամ հայտատուի անվան կամ անվանման փոփոխություն կատարելու մասին դիմում ներկայացնելու,

4) Գրասենյակի հիմնավոր կասկածների, թե արդյոք արտոնագրային հավատարմատարն ունի համապատասխան լիազորություններ:

7. ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԵՏ

29. Հայտը և մյուս փաստաթղթերը Գրասենյակ ներկայացվում են առձեռն կամ փոստային առաքմամբ, կամ հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի միջոցով (էլեկտրոնային եղանակով)՝ այցելելով Գրասենյակի www.aipa.am կայքը: Մյուս փաստաթղթերը կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստի միջոցով: Ընդ որում, փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ուղարկման դեպքում դրանք ուղարկողը փաստաթղթերը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

30. Հայտին վերաբերող ցանկացած փաստաթուղթ, որը մինչև սահմանված ժամկետի լրանալը ուղարկվել է էլեկտրոնային փոստով, համարվում է ժամանակին ներկայացված, եթե դրա բնօրինակը Գրասենյակ է ներկայացվում սահմանված ժամկետի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում: Եթե Գրասենյակը ստանում է բնօրինակ փաստաթուղթը նշված ժամանակա-հատվածի ավարտից հետո, ապա համարվում է, որ համապատասխան փաստաթուղթը ներկայացվել է տվյալ փաստաթղթի բնօրինակի ստացման թվականին:

31. Հայտ ներկայացնելուց հետո դրան վերաբերող նյութերը ներկայացվում են հայտի համարի նշմամբ և հայտատուի կամ նրա ներկայացուցչի ստորագրությամբ: Եթե հայտատուն իրավաբանա-կան անձ է, նրա անունից փաստաթղթերը ստորագրվում են սույն կարգի 5-րդ կետի 14-րդ ենթակետով սահմանված կարգով:

32. Եթե ծանուցմանը համապատասխան ներկայացված նյութերում հայտի համարը նշված չէ, ապա դրանք վերադարձվում են առանց քննարկման, այն դեպքում, երբ հայտի համարը հնարավոր չէ որոշել անուղղակի ճանապարհով:

33. Օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Գրասենյակը գործավարությունն իրականացնում է հայերենով, ընդ որում, եթե գործավարության ընթացքում Գրասենյակ են ներկայացվում որևէ ժամկետի հետ կապ չունեցող այլ լեզվով փաստաթղթեր, ապա այդ փաստաթղթերին պետք է կցվի դրանց հայերեն թարգմանությունը: Այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը համարվում է չներկայացված, եթե դրան կցված չէ դրա հայերեն թարգմանությունը:

34. Գրասենյակ ներկայացված նյութերը, որոնք ձևակերպված են թերություններով կամ դժվար ընթեռնելի են, չեն քննարկվում, ինչի մասին ծանուցվում է այդ նյութերը ներկայացրած անձը:

35. Գրասենյակի կողմից ուղարկված նյութերին (ծանուցմանը, որոշմանը և այլն) ի պատասխան անհրաժեշտ նյութերը ներկայացնելու ժամկետը հաշվարկվում է հայտատուին կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցչին նյութերի ուղարկման օրվանից:

36. Գրասենյակի կողմից ընդունված որոշումները, ծանուցումները ուղարկվում են հայտատուին նրա կողմից փաստաթուղթը ներկայացնելու համար ընտրված սկզբնական եղանակով՝ այդ մասին նշում կատարելով արդյունաբերական դիզայնի արտոնագիր ստանալու մասին դիմումի մեջ, կամ իր կողմից հետագայում ընտրված եղանակներից մեկով՝ փոստային առաքմամբ կամ կապի այլ միջոցների օգտագործմամբ (այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), կամ հայտերի էլեկտրոնային ընդունման համակարգի միջոցով, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

37. Հայտատուն սույն կարգի համաձայն ստացած ծանուցումների պատասխանները, ինչպես նաև արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրերը և դրանց կից փաստաթղթերը կարող է ներկայացնել Գրասենյակ՝ իր կողմից նախընտրած եղանակով՝ փոստով կամ կապի միջոցների օգտագործմամբ (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) կամ հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի միջոցով (եթե հայտը ուղարկվել է էլեկտրոնային համակարգի միջոցով):

38. Եթե Գրասենյակի կողմից պատվիրված փոստային առաքմամբ ուղարկված նյութերը հայտատուին կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցչին չեն հասնում նամակագրության հասցեի փոփոխության պատճառով, ինչի մասին հայտատուն կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցիչը տեղյակ չի պահել Գրասենյակին, ապա նշված նյութերը պատվիրված փոստային առաքմամբ (գտնվելու (բնակության) վայրի հասցեով) ուղարկվում են հայտատուին կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցչին: Եթե նշված նյութերը հայտատուին կամ համապատասխան դեպքում՝ նրա ներկայացուցչին չեն հասնում նրա գտնվելու (բնակության) վայրի փոփոխության պատճառով, ինչի մասին Գրասենյակը չի տեղեկացվել, ապա տվյալ հայտով գործավարությունը դադարեցվում է, և հայտը համարվում է հետ կանչված:

8. ՀԱՅՏԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

39. Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն հայտատուի կողմից թույլ տրված վրիպակների ուղղման համար դիմումը (այսուհետ (սույն մասում)՝ Դիմում) ներկայացնում է հայտատուն կամ նրա ներկայացուցիչը, որին կցվում է օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը։

40. Դիմումում նշվում են հետևյալ տվյալները՝

1) հայտի համարը և հայտի ներկայացման թվականը (եթե հայտի համարը և թվականը սահմանված չեն, ապա նշվում է մտից համարը և թվականը),

2) հայտատուի անունը, հայրանունը (եթե այն նշված է), ազգանունը (անվանումը) և հայտատուի հասցեն,

3) ներկայացուցչի անունը, ազգանունը և հասցեն, եթե Դիմումը ներկայացվում է ներկայացուցչի կողմից,

4) նամակագրության հասցեն (անհրաժեշտության դեպքում).

5) թույլ տրված վրիպակները և դրանց առաջարկվող ուղղումները.

6) Դիմումն ստորագրող հայտատուի կամ ներկայացուցչի անվան սկզբնատառը, ազգանունը և ստորագրման թվականը,

41. Դիմումին կցվում են՝

1) հայտատուի կողմից ստորագրված լիազորագիր, եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով.

2) տվյալների ճշտությունը հաստատող փաստաթուղթ, որի ուղղումը պահանջվում է դիմումի համաձայն.

3) ուղղած պատկերները կամ գրաֆիկական նյութերը, եթե պահանջվում է արդյունաբերական դիզայնի պատկերներում կամ գրաֆիկական նյութերում թույլ տրված վրիպակների ուղղում.

4) վրիպակների ուղղման համար պետական տուրքի վճարման անդորրագիրը։

42. Եթե ճշգրտումները վերաբերվում են նույն հայտատուի գրանցման մի քանի հայտերում միևնույն վրիպակի ճշգրտմանը, ապա բավարար է վրիպակի ուղղման համար ներկայացնել մեկ դիմում՝ նշելով համապատասխան հայտերի համարները և ամսաթիվը, պայմանով, որ վրիպակի

ուղղման համար վճարը կատարված է առանձին յուրաքանչյուր հայտի համար: Այս դեպքում դիմումի բնօրինակը ներկայացվում է հայտերից մեկով, իսկ մնացածներից յուրաքանչյուրով ներկայացվում է դրա պատճենը, որի վրա նշվում է այն հայտը, որում պահվում է դիմումի բնօրինակը:

43. Դիմումի քննարկումը իրականացվում է դրա ներկայացման օրվանից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պարզվում է, որ այն ներկայացվել է առանց պետական տուրքի վճարման անդորրագրի, ապա քննարկման չի ընդունվում, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

44. Դիմումի քննարկման ընթացքում ստուգվում է՝

1) սույն կարգի 41-րդ կետում նշված տվյալների առկայությունը.

2) Դիմումում նշված տվյալների և կցված փաստաթղթերում պարունակվող տվյալների համապատասխանությունը արդյունաբերական դիզայնի հայտերի պետական գրանցամատյանում կամ գրանցված արդյունաբերական դիզայնի պետական գրանցամատյանում,

3) արդյոք խնդրարկվող ուղղումն իրենից չի ներկայացնում հայտարկված կամ գրանցված արդյունաբերական դիզայնի էության փոփոխություն,

4) պետական տուրքի վճարման անդորրագրի առկայությունը և վճարված գումարի համապատասխանությունն օրենքով սահմանված չափին:

45. Եթե Դիմումի քննարկման ընթացքում հայտնաբերվում են անհամապատասխանություններ, կամ պետական տուրքը վճարվել է օրենքով սահմանված չափից պակաս, ապա Գրասենյակը այդ մասին ծանուցում է դիմումատուին՝ երկամսյա ժամկետում վերացնել հայտնաբերված անհամապատասխանությունները:

46. Դիմումը մերժվում է, և Գրասենյակն այդ մասին ծանուցում է դիմումատուին, եթե՝

1) վրիպակների ուղղումը հանգեցնում է արդյունաբերական դիզայնի էության փոփոխությանը,

2) սահմանված ժամկետում չեն վերացվել սույն կարգի 45-րդ կետում նշված անհամապատաս-խանությունները:

9. ՀԱՅՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

47. Օրենքի 43-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն, հայտի քննարկման ցանկացած փուլում օրենքով սահմանված պետական տուրքի վճարման պայմանով, հայտատուն կամ նրա ներկայացուցիչը կարող է ներկայացնել դիմում հայտում փոփոխություններ կատարելու մասին (այսուհետ (սույն մասում)՝ Դիմում), որոնք չեն հանգեցնում արդյունաբերական դիզայնի էության փոխոխության:

48. Դիմումը պետք է վերաբերի մեկ փոփոխության և պարունակի հետևյալ տվյալները՝

1) հայտի համարը և ներկայացման թվականը (եթե հայտի համարը և թվականը սահմանված չեն, ապա նշվում է մտից համարը և թվականը).

2) հայտատուի անունը, հայրանունը (եթե այն նշված է), ազգանունը (անվանումը) և հայտատուի հասցեն.

3) ներկայացուցչի անունը, ազգանունը և հասցեն, եթե Դիմումը ներկայացվում է ներկայացուցչի կողմից.

4) նամակագրության հասցեն (անհրաժեշտության դեպքում).

5) նշում այն տարրի մասին, որի համար խնդրարկվում է փոփոխությունը և առաջարկվող փոփոխությունը.

6) Դիմումն ստորագրող հայտատուի կամ ներկայացուցչի անվան սկզբնատառը, ազգանունը և ստորագրման թվականը:

49. Մեկ փոփոխություն է համարվում՝

1) հայտատուի նույնականացման տվյալների փոփոխությունը (ֆիզիկական անձանց համար՝ անունը, հայրանունը (եթե այն նշված է), ազգանունը, և (կամ) հասցեն, կազմակերպությունների համար՝ անվանումը և (կամ) գտնվելու վայրը և (կամ) կազմակերպաիրավական ձևը).

2) նամակագրության հասցեի փոփոխությունը.

3) արդյունաբերական դիզայնի փոփոխությունը:

50. Պատկերների փոփոխությունը կարելի է անել, եթե՝

1) բացակայում են օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ կամ 9-րդ կետերում նշված տարրերի վերաբերյալ որևէ ապացույց՝ բացառելով այդ տարրերը արդյունաբերական դիզայնից.

2) ավելացվում են արդյունաբերական դիզայնի լրացուցիչ պատկերներ:

51. Եթե Դիմումով խնդրարկվող փոփոխությունը կարող է հանգեցնել արդյունաբերական դիզայնի էության փոփոխության, ապա Դիմումը տվյալ փոփոխության մասով հաշվի չի առնվում:

52. Դիմումին պետք է կցվեն հետևյալ փաստաթղթերը՝

1) լիազորագիր, որը ստորագրվում է հայտատուի կողմից, եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի կողմից.

2) փոփոխությունը հաստատող փաստաթուղթը, եթե փոփոխվում է հայտատուի անվանումը.

3) հայտի նկատմամբ իրավունքների փոխանցումը հաստատող փաստաթուղթը, եթե փոփոխ-վում է հայտատուն.

4) հայտում փոփոխություններ կատարելու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

53. Եթե փոփոխությունները վերաբերում են նույն հայտատուի մի քանի հայտերում միևնույն տարրի փոփոխությանը, ապա բավարար է փոփոխության համար ներկայացնել մեկ դիմում՝ նշելով համապատասխան հայտերի համարները՝ պայմանով, որ փոփոխության համար պետական տուրքը վճարված է յուրաքանչյուր հայտի համար առանձին: Այս դեպքում Դիմումի բնօրինակը ներկայացվում է հայտերից մեկով, իսկ մնացածներից յուրաքանչյուրով ներկայացվում է դրա պատճենը, որի վրա նշվում է այն հայտի համարը, որում պահվում է դիմումի բնօրինակը:

54. Եթե փոփոխությունները վերաբերում են նույն հայտում մի քանի փոփոխություններին, ապա բավարար է փոփոխությունների համար ներկայացնել մեկ դիմում՝ նշելով համապատասխան հայտի համարը՝ պայմանով, որ փոփոխությունների համար պետական տուրքը վճարված է յուրաքանչյուր փոփոխության համար:

55. Դիմումի քննարկումը իրականացվում է դրա ներկայացման օրվանից հետո յոթ աշխա-տանքային օրվա ընթացքում: Եթե պարզվում է, որ այն ներկայացվել է առանց պետական տուրքի վճարման անդորրագրի, ապա դիմումը քննարկման չի ընդունվում, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

56. Դիմումը քննարկելու ընթացքում ստուգվում են անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը և առաջարկվող փոփոխությունների համապատասխանությունը սահմանված պահանջներին:

57. Եթե դիմումի քննարկման ընթացքում պարզվում է, որ դիմումը լրացված է թերություններով կամ բացակայում են փոփոխությունը հաստատող փաստաթղթերը, կամ վճարված գումարը չի համապատասխանում սահմանված պետական տուրքի չափին, ապա հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ նշված անհամապատասխանությունները երկամյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Այս դեպքում քննարկման ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև ծանուցման պատասխանի ստացումը:

58. Դիմումի քննարկման արդյունքների հիման վրա Գրասենյակը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) բավարարել դիմումը, եթե այն համապատասխանում է սահմանված պահանջներին, կամ սահմանված ժամկետում վերացվել են ծանուցման մեջ նշված բոլոր անհամապատասխանությունները.

2) մերժել դիմումը, եթե դիմումը չի համապատասխանում սահմանված պահանջներին, կամ սահմանված ժամկետում չեն վերացվել ծանուցման մեջ նշված բոլոր անհամապատասխանությունները:

3) մերժել դիմումը մասնակիորեն, (մեկ դիմումով մեկից ավելի փոփոխություններ խնդրարկելու դեպքում), եթե դիմումը մասամբ չի համապատասխանում սահմանված պահանջներին, կամ սահմանված ժամկետում ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները վերացվել են մասամբ:

59. Դիմումը բավարարելու դեպքում Գրասենյակը համապատասխան գրառումներ կատարելու միջոցով փոփոխություններ է կատարում արդյունաբերական դիզայնի հայտերի հիմնապաշարում:

10. ՀԱՅՏԻ ԶԱՏՈՒՄԸ

60. Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն մեկից ավելի արդյունաբերական 17իզայներ ներառող հայտը հայտատուի նախաձեռնությամբ կամ Գրասենյակի առաջարկով կարող է բաժանվել մեկ կամ մի քանի զատված հայտ ներկայացնելու միջոցով՝ սկզբնական հայտում ներկայացված արդյունաբերական դիզայնները բաշխելով այդ հայտերի միջև:

61. Հայտը կարող է զատվել հայտատուի կողմից հետևյալ պայմանների պահպանման դեպքում՝

1) մինչև սկզբնական հայտով ընդունված արտոնագիր տալը մերժելու մասին որոշումը բողոքարկելու հնարավորությունների սպառվելը, իսկ սկզբնական հայտով ընդունված արտոնագիր տալու մասին որոշման դեպքում՝ ոչ ուշ, քան արդյունաբերական դիզայնի պետական գրանցումը.

2) զատված հայտ ներկայացնելու օրվա դրությամբ սկզբնական հայտը հետ կանչված չէ կամ հետ կանչված ճանաչված չէ:

62. Զատված հայտը պետք է բավարարի հայտին ներկայացվող բոլոր պահանջներին, ինչպես նաև զատված հայտերի համար առանձնահատուկ պահանջներին, մասնավորապես՝ զատված հայտով հայտատուն չի կարող խնդրարկել իրավական պահպանություն այն արդյունաբերական դիզայնների նկատմամբ, որոնք նույնական են այն արդյունաբերական դիզայններին, որոնց նկատմամբ սկզբնական հայտով խնդրարկվում է իրավական պահպանություն:

63. Զատված հայտը պետք է ներկայացված լինի սկզբնական հայտի հայտատուի(ների) կողմից, իսկ այլ հայտատուի(ների) կողմից ներկայացվելու դեպքում պետք է կիրառվեն օրենքի 56-րդ և 57-րդ հոդվածներով նախատեսված հայտի նկատմամբ իրավունքի փոխանցման դրույթները:

64. Զատված հայտի սկզբնական հայտին համապատասխանության ստուգումն իրականացվում է՝ զատված հայտով նախնական փորձաքննության անցկացման ընթացքում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, ըստ էության փորձաքննության անցկացման ընթացքում:

65. Զատված հայտ ներկայացնելիս չի պահանջվում առաջին հայտի (սկզբնական հայտով ավելի վաղ առաջնություն խնդրարկելու դեպքում) վավերացված պատճենը, եթե այն սկզբնական հայտով ներկայացված է եղել:

66. Եթե սկզբնական հայտով առաջնության խնդրարկումը մերժվել է կամ հայտատուն հրաժարվել է դրանից, ապա զատված հայտով առաջնություն չի տրամադրվում:

67. Զատված հայտ ներկայացնելու հնարավորությունը պահպանվում է այն դեպքում, երբ դեռ չի լրացել հետ կանչված համարված սկզբնական հայտի նկատմամբ իրավունքների վերականգման մասին դիմումի ներկայացման ժամկետը:

68. Օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զատված հայտով, որը առանձնացվել է այն սկզբնական ներկայացված հայտից, որով սկսվել էր ըստ էության փորձաքննության

անցկացումը և վճարվել էր օրենքով սահմանված պետական տուրքը, ըստ էության փորձաքննությունն անցկացվում է հայտի նախնական փորձաքննության դրական արդյունքով ավարտից անմիջապես հետո:

69. Սույն կարգի 68-րդ կետում նշված դեպքում՝ զատված հայտ ներկայացնելիս, ըստ էության փորձաքննություն անցկացնելու համար սահմանված պետական տուրքը չի վճարվում:

11. ՀԱՅՏԻ ԿԱՄ ԴԻՄՈՒՄԻ ՀԵՏԿԱՆՉՈՒՄԸ

70. Օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ գործավարության ցանկացած փուլում հայտատուն կարող է հետ կանչել Գրասենյակ ներկայացրած իր հայտը կամ ցանկացած դիմումը:

71. Գրասենյակը հայտը հետ կանչված է համարում դրա մասին հայտատուի ներկայացրած գրավոր դիմումի հիման վրա ընդունած որոշմամբ, որում նշվում է հետկանչման հիմքը:

72. Հայտը կամ դիմումը համարվում է հետ կանչված՝ Գրասենյակի կողմից հետկանչման դիմումն ստանալու օրվանից:

73. Հայտի հետկանչման մասին իր դիմումը չեղյալ համարելու վերաբերյալ հայտատուի խնդրանքը, որը ներկայացվել է դիմումի ներկայացումից հետո, չի կարող բավարարվել:

74. Եթե Գրասենյակը օրենքով և սույն կարգով նախատեսված դեպքերում կայացրել է որոշում հայտը հետ կանչված համարելու մասին, ապա այդ որոշումն ուղարկվում է հայտատուին: Որոշումը հայտատուին ուղարկելուց հետո հայտի գործավարությունը դադարեցվում է, իրավաբանական նշանակություն ունեցող որևէ գործողություն չի կատարվում, փորձաքննություն չի անցկացվում, և արդյունաբերական դիզայնին արտոնագիր չի տրվում: Այլ հայտերի փորձաքննության ընթացքում հետ կանչված համարված հայտը հաշվի չի առնվում:

12. ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

75. Մինչև տվյալ հայտով գործավարության ավարտը՝ օրենքի 56-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հայտատուն արտոնագիր ստանալու իրավունքն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող է պայմանագրով փոխանցել այլ անձի:

76. Արտոնագիր ստանալու իրավունքի փոխանցման մասին դիմումը պետք է առնվազն ներառի՝ հայտի համարը, դրա ներկայացման թվականը, արտոնագիր ստանալու իրավունքը փոխանցողի (հայտատուի) և այդ իրավունքները ստացողի (նոր հայտատուի) վերաբերյալ տվյալներ (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում)՝ անհատ ձեռնարկատեր նշմամբ, հաշվառման վայրը, կազմակերպության դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը)։ Եթե արտոնագիր ստանալու իրավունքը փոխանցողը և այդ իրավունքը ստացողը մի քանիսն են, նշված տեղեկությունները բերվում են նրանցից յուրաքանչյուրի համար։ Դիմումը պետք ստորագրված լինի՝ և իրավունք փոխանցողի և այդ իրավունքը ստացողի կողմից։

77. Արտոնագիր ստանալու իրավունքի փոխանցման մասին դիմումին հայտատուն պետք է կցի արտոնագիր ստանալու իրավունքի փոխանցման մասին դիմումի քննարկման և դրա արդյունքներով որոշում կայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը։

78. Գրասենյակն արտոնագիր ստանալու իրավունքի փոխանցման մասին դիմումի քննարկման ընթացքում ստուգում է դրա՝ սույն կարգի 75-77-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխանությունը։

79. Արտոնագիր ստանալու իրավունքի փոխանցման մասին դիմումը քննարկելիս Գրասենյակն այն ներկայացնելու օրվանից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է՝ սահմանված ժամկետում դիմումը ներկայացնելու փաստը, դիմումի մեջ անհրաժեշտ տեղեկությունների առկայությունը, սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի առկայությունը և վճարված պետական տուրքի չափի համապատասխանությունը սահմանվածին, հաշվի առնելով՝ նվազեցված դրույքաչափով դրա վճարման հնարավորությունը։

80. Առանց համապատասխան պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի առկայության արտոնագիր ստանալու իրավունքի փոխանցման մասին դիմումը համարվում է չներկայացված, ինչի մասին հայտատուն ծանուցվում է։

81. Եթե սույն կարգի 76-րդ կետի համաձայն կատարված ստուգման արդյունքում Գրասենյակը գտնում է, որ դիմումը համարվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա

որոշում է կայացվում արտոնագիր ստանալու իրավունքի փոխանցման մասին, ինչի մասին հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է:

82. Սույն կարգի 81-րդ կետի համաձայն կայացված որոշման հիման վրա գրասենյակը համապատասխան փոփոխություն է կատարում արդյունաբերական դիզայնի հայտերի հիմնապաշարում:

13. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

83. Համաձայն օրենքի 7–րդ հոդվածի 1-ին մասի՝ Գրասենյակը թույլատրում է ցանկացած անձի ուսումնասիրել հայտերին վերաբերող փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգի 84-90-րդ կետերում նախատեսված դեպքերի:

84. Համաձայն օրենքի 8–րդ հոդվածի 3-րդ մասի՝ մինչև Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում արդյունաբերական դիզայնի հայտերի մասին տեղեկությունների հրապարակումը դրանց նյութերը համարվում են գաղտնի:

85. Սույն կարգի 84-րդ կետի համաձայն, ինչպես նաև քրեական գործերով նախնական քննություն իրականացնող մարմինների ծանոթացման համար գաղտնի համարվող նյութերը մատչելի են դառնում միայն հայտատուի գրավոր համաձայնությամբ կամ թույլտվությամբ:

86. Դատարանի համար գաղտնի համարվող նյութերը մատչելի են դառնում օրենքով սահմանված կարգով:

87. Գաղտնի համարվող (չհրապարակված) հայտերի նյութերին ծանոթանալ ցանկացողները հայտատուի գրավոր ձևակերպված վերը նշված համաձայնությունը կամ թույլտվությունը ներկայացնում են Գրասենյակ, որի հիման վրա Գրասենյակը թույլատրում է ծանոթանալ պահանջվող փաստաթղթերին պայմանավորված օրը և ժամին, առանց նյութերից քաղվածքներ և պատճեններ պատրաստելու:

88. Ընդ որում, գաղտնի համարվող նյութերը համարվում են ծանոթացման համար մատչելի, եթե դրանց հնարավոր է ծանոթանալ օրենքով չարգելված միջոցով, այդ թվում՝ անմիջական հաղորդակցման կամ սովորական հրապարակման միջոցով:

89. Ցանկացած անձ, որը կարող է Գրասենյակին ապացուցել, որ հայտատուն իրեն գրավոր տեղեկացրել է հայտի և խնդրարկվող իրավական ծավալի մասին, կարող է ծանոթանալ չհրապարակված նյութերին՝ առանց հայտատուի լրացուցիչ համաձայնության կամ թույլտվության:

90. Մինչև պաշտոնական տեղեկագրում արդյունաբերական դիզայնի հայտի մասին տեղեկությունների հրապարակումը Գրասենյակը կարող է բացահայտել կամ երրորդ անձանց տրամադրել հետևյալ տվյալները՝

1) հայտի համարը.

2) հայտի ներկայացման թվականը, իսկ առաջնություն խնդրարկելու դեպքում՝ նաև առաջին հայտի ներկայացման թվականը, համարը և երկիրը.

3) հայտատուին վերաբերող տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում)՝ անհատ ձեռնարկատեր նշմամբ, հաշվառման վայրը, կազմակերպության դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը):

14. ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՇՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼԸ

91. Հայտատուն (կամ նրա ներկայացուցիչը) կարող է Գրասենյակից պահանջել փորձաքննության հարցման կամ որոշման մեջ նշված նյութերի պատճենները: Նշված նյութերն ուղարկվում են հայտատուի դիմումի ստացման օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ համապատասխան պետական տուրք վճարելու պայմանով:

92. Եթե այդ նյութերը վերաբերում են չհրապարակված հայտին, ապա հայտատուին կարող են տրամադրվել այդ հայտի վերաբերյալ միայն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում նշված տվյալները: Այդ նյութերի պատճենները հայտատուին չեն ուղարկվում:

15. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

93. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արդյունաբերական դիզայնի առաջնությունը որոշվում է հայտը Գրասենյակ ներկայացնելու թվականով:

94. Արդյունաբերական դիզայնի միջազգային առաջնությունը, այդ թվում նաև մի քանի առաջնությունները, որոշվում են օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, եթե բավարարում են հետևյալ պայմաններին՝

1) արդյունաբերական դիզայնի հայտը Գրասենյակ է ներկայացվել առաջին հայտի (հայտերի) ներկայացման թվականից վեց ամսվա ընթացքում,

2) հայտատուն միջազգային առաջնությունից, այդ թվում նաև մի քանի առաջնություններից օգտվելու համար հայտնել է հայտ ներկայացնելիս կամ հայտի ներկայացման թվականից երկու ամսվա ընթացքում,

3) ներկայացվել է օրենքով սահմանված պետական տուրքը յուրաքանչյուր խնդրարկվող առաջնության համար,

4) առաջին հայտի ներկայացման թվականից (իսկ եթե առաջին հայտերը մի քանիսն են, ապա այդ հայտերի ամենավաղ ներկայացման թվականից) ինն ամսվա ընթացքում Գրասենյակ է ներկայացվել առաջին հայտի ներկայացման գերատեսչության կողմից տվյալ հայտի վավերացված պատճենը,

5) մի քանի առաջնություններ կարող են խնդրարկվել մի քանի առաջին հայտերի հիման վրա, որոնք ներկայացվել են մեկ կամ մի քանի երկրներում: Եթե խնդրարկել են մի քանի առաջնություններ, առաջնություն խնդրարկելու ժամկետը հաշվարկվում է ամենավաղ առաջնության թվականից:

95. Սույն կարգի 94-րդ կետի 1-ին ենթակետում նշված պահանջները չկատարելու դեպքում խնդրարկվող առաջնությունը չի տրամադրվում, ինչի մասին հայտատուն ծանուցվում է: Տվյալ ծանուցումը չի ուղարկվում, եթե հայտատուն օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետում Գրասենյակ է ներկայացնում առաջնության իրավունքի վերականգնման մասին դիմում, կցելով առաջնության իրավունքի վերականգնման մասին դիմումի քննարկման և դրա արդյունքներով որոշում կայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

96. Սույն կարգի 94-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված պահանջները չկատարելու դեպքում խնդրարկվող առաջնությունը չի տրամադրվում:

97. Օրենքի 29-րդ հոդվածի 7–րդ մասի համաձայն արդյունաբերական դիզայնի առաջնությունը կարող է որոշվել նույն արդյունաբերական դիզայնի էությունը բացահայտող նույն հայտատուի

սկզբնական (ավելի վաղ ներկայացված) հայտի ներկայացման թվականով (ներքին առաջնություն), պայմանով, որ այն հետ կանչված չէ կամ հետկանչված համարված չէ այն հայտի ներկայացման թվականի դրությամբ, որով խնդրարկվում է այդպիսի առաջնություն, եթե նոր հայտը Գրասենյակ ներկայացվել է սկզբնական հայտի ներկայացման թվականից սկսած՝ վեց ամսվա ընթացքում: Այս դեպքում սկզբնական հայտը համարվում է հետ կանչված: Եթե հայտով արդեն խնդրարկվել է ավելի վաղ առաջնություն, ապա այդ հայտով առաջնությունը չի կարող որոշվել:

98. Ցուցահանդեսային առաջնությունը որոշվում է օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

1) արդյունաբերական դիզայնի հայտը Գրասենյակ է ներկայացվել Հայաստանի Հանրապետությունում կամ Փարիզյան կոնվենցիային մասնակից կամ այդ կոնվենցիայի մասնակից չհանդիսացող Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ որևէ պետությունում կազմակերպված պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսում իրի կամ նրա մի մասի արտաքին տեսքի առաջին ցուցադրման օրից հետո՝ վեց ամսվա ընթացքում,

2) Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն անձը, որը խնդրարկում է ցուցահանդեսային առաջնություն, Գրասենյակ հայտ ներկայացնելիս կամ հայտի ներկայացման թվականից եռամսյա ժամկետում նշում է ցուցահանդեսի տեսակը, դրա անցկացման վայրը, բացման և փակման թվականները, ցուցադրման առաջին օրը, ներկայացնելով ցուցահանդեսի միջազգային կարգավիճակի մասին գրավոր հավաստագիրը, որը տրվել է ցուցահանդեսը կազմակերպած մարմնի կողմից,

3) հայտատուն ցուցահանդեսային առաջնությունից օգտվելու համար հայտնել է հայտ ներկայացնելիս կամ հայտի ներկայացման թվականից երկու ամսվա ընթացքում:

99. Եթե սույն կարգի 98-րդ կետի համաձայն կատարված ստուգման արդյունքում Գրասենյակը գտնում է, որ սահմանված պահանջները չեն պահպանվել, ապա խնդրարկվող ցուցահանդեսային առաջնությունը չի տրվում, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

100. Խնդրարկվող առաջնությունը ճշգրտելու կամ լրացնելու համար հայտատուն կարող է դիմում ներկայացնել Գրասենյակ առաջնության թվականից, կամ եթե ճշգրտումը կամ լրացումն առաջացնում է առաջնության թվականի փոփոխություն՝ այդ փոփոխված առաջնության

թվականից ինն ամսվա ընթացքում, պայմանով, որ այդ դիմումը Գրասենյակ է ներկայացվում հայտը ներկայացնելու թվականից երեք ամսվա ընթացքում:

101. Դիմումին պետք է կցվի խնդրարկվող առաջնությունը ճշգրտելու կամ լրացնելու համար դիմումի քննարկման և դրա արդյունքներով որոշում կայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

102. Խնդրարկվող առաջնությունը ճշգրտելու կամ լրացնելու համար դիմումի քննարկման ընթացքում Գրասենյակը ստուգում է դրա՝ սույն կարգի 100-րդ և 101-րդ կետերով սահմանված պայմաններին համապատասխանությունը:

103. Խնդրարկվող առաջնությունը ճշգրտելու կամ լրացնելու համար դիմումը քննարկելիս Գրասենյակն այն ներկայացնելու օրվանից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է՝ սահմանված ժամկետում դիմումը ներկայացնելու փաստը, սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի առկայությունը և վճարված պետական տուրքի չափի համապատասխանությունը սահմանվածին:

104. Եթե խնդրարկվող առաջնությունը ճշգրտելու կամ լրացնելու համար դիմումը ներկայացվել է սույն կարգի 100-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո կամ դիմումին կից չի ներկայացվել սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, ապա դիմումը համարվում չներկայացված է, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

105. Եթե սույն կարգի 100-րդ և 101-րդ կետերի համաձայն, ինչպես նաև նույն հայտատուի կամ նրա իրավահաջորդի կողմից ներկայացված սկզբնական (ավելի վաղ ներկայացված) հայտի վավերացված պատճենի առկայության ստուգման արդյունքում Գրասենյակը գտնում է, որ դիմումը համապատասխանում է սահմանված պահանջներին, ապա խնդրարկվող առաջնությունը ճշգրտվում կամ լրացվում է:

106. Եթե սույն կարգի 101-րդ կետում նշված պետական տուրքը վճարված է ոչ լրիվ, ապա հայտատուին առաջարկվում է այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում լրավճարել պետական տուրքը:

107. Համաձայն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, եթե հայտը, որով խնդրարկվում է միջազգային առաջնություն, հայտատուի կողմից Գրասենյակ է ներկայացվում ուշացումով՝ առաջին հայտի ներկայացման թվականից վեց ամիս լրանալուց հետո, ապա հայտատուն կարող

է առաջնության իրավունքի վերականգնման մասին դիմում ներկայացնել Գրասենյակ (եթե նշված ժամկետի խախտումը տեղի է ունեցել հայտատուից անկախ հանգամանքներով, ինչի իրական լինելը հայտատուն պետք է ապացուցի Գրասենյակին):

108. Սույն կարգի 107-րդ կետում նշված դեպքում առաջնության իրավունքի վերականգնման մասին դիմումը Գրասենյակ ներկայացվում է առաջնության թվականի խնդրարկման ժամկետի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում՝ կցելով սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

109. Առաջնության իրավունքի վերականգնման մասին դիմումը քննարկելիս Գրասենյակն այն ներկայացնելու օրվանից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է՝ սահմանված ժամկետում դիմումը ներկայացնելու փաստը, սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի առկայությունը և վճարված պետական տուրքի չափի համապատասխանությունը սահմանվածին:

110. Եթե դիմումը ներկայացվել է սույն կարգի 107-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո կամ չի կցել սույն կարգի 108-րդ կետում նշված սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, ապա դիմումը մերժվում է, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

111. Եթե Գրասենյակը սույն կարգի 107-րդ և 108-րդ կետերում նշված պայմանները համարում է կատարված, ապա ստուգվում են հայտատուի կողմից ներկայացված՝ ժամկետի խախտումը հայտատուից անկախ հանգամանքներով պայմանավորված լինելն ապացուցող փաստաթղթերը:

112. Եթե սույն կարգի 111-րդ կետի համաձայն անցկացված ստուգման արդյունքում Գրասենյակը ժամկետի խախտումը հայտատուից անկախ հանգամանքներով պայմանավորված լինելն ապացուցող փաստաթղթերը համարում է հիմնավոր, ապա առաջնության իրավունքը վերականգնվում է, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

113. Եթե սույն կարգի 111-րդ կետի համաձայն անցկացված ստուգման արդյունքում Գրասենյակը ժամկետի խախտումը հայտատուից անկախ հանգամանքներով պայմանավորված լինելը համարում է չապացուցված, ապա առաջնության իրավունքի վերականգնման մասին դիմումը մերժվում է, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

114. Եթե օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն առաջին հայտի վավերացված պատճենը չի ներկայացվել պետական լիազոր մարմին օրենքով սահմանված ժամկետում, ապա

Գրասենյակը կարող է վերականգնել առաջնության իրավունքը օրենքի տվյալ մասում նշված պայմանները պահպանելու դեպքում:

115. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պայմանների ստուգման ժամանակ կիրառվում են սույն կարգի 110-113-րդ կետերով նախատեսված մոտեցումները:

116. Սույն կարգի 94-98-րդ կետերում նշված պահանջները չկատարելու դեպքում արդյունաբերական դիզայնի առաջնությունը սահմանվում է հայտը Գրասենյակ ներկայացնելու թվականով՝ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան:

117. Սկզբնական հայտից զատված հայտի արդյունաբերական դիզայնի առաջնությունը, որոշվում է միևնույն հայտատուի կողմից Գրասենյակ ներկայացված սկզբնական հայտի ներկայացման թվականով, իսկ սկզբնական հայտով ավելի վաղ առաջնություն խնդրարկելու իրավունք ունենալու դեպքում՝ խնդրարկված ավելի վաղ առաջնության թվականով:

16. ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ

118. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, հայտատուի գրավոր դիմումի համաձայն, Գրասենյակի ծանուցմամբ պահանջված նյութերը ներկայացնելու կամ օրենքով սահմանված և (կամ) դրանից բխող այլ գործողության իրականացման համար նախատեսված ժամկետը երկարաձգվում է առավելագույնը վեց ամսով:

119. Դիմումը, որին կցվում է այն ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, Գրասենյակ ներկայացվում է մինչև նախատեսված ժամկետի ավարտը:

120. Ժամկետի երկարաձգման մասին դիմումի մեջ նշվում է, թե ինչքան ժամանակով է խնդրարկվում ժամկետի երկարաձգումը, որը չի կարող վեց ամսվանից ավելի լինել: Դիմումի մեջ նման նշում չլինելու դեպքում Գրասենյակը ժամկետը երկարաձգում է վեց ամսով: Նախատեսված ժամկետի երկարաձգման մասին հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցվում է:

121. Ժամկետի երկարաձգման մասին դիմումը քննարկելիս Գրասենյակն այն ներկայացնելու օրվանից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է՝ սահմանված ժամկետում դիմումը ներկայացնելու փաստը, դիմումի մեջ անհրաժեշտ տեղեկությունների առկայությունը,

սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի առկայությունը և վճարված պետական տուրքի չափի համապատասխանությունը սահմանվածին, հաշվի առնելով՝ նվազեցված դրույքաչափով դրա վճարման հնարավորությունը:

122. Նախատեսված ժամկետը չի երկարաձգվում, եթե դիմումն ստացվել է այն ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ չի ներկայացվել սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը:

17. ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅՏՈՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

123. Հայտատուն, որը սահմանված ժամկետում չի կատարել արդյունաբերական դիզայնի նկատմամբ իրավունքների ձեռքբերման գործընթացներին առնչվող պարտադիր գործողություն-ները, օրինակ՝

1) ծանուցումն ուղարկելու օրվանից երկամսյա ժամկետում չի պատասխանել հայտի ուղղված կամ բացակայող մասերի կամ փաստաթղթերի ներկայացման առաջարկությամբ Գրասենյակի ծանուցմանը.

2) հայտի ներկայացման օրվանից եռամսյա ժամկետում Գրասենյակ չի ներկայացրել հայտի փաստաթղթերի հայերեն թարգմանությունը.

3) Գրասենյակի համապատասխան ծանուցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում չի լրավճարել սահմանված չափից պակաս վճարված հայտ ներկայացնելու համար պետական տուրքը և այլն, որի հետևանքով կորցրել է հայտի նկատմամբ ունեցած իրավունքը, կարող է դիմել Գրասենյակ՝ իր իրավունքը վերականգնելու և հայտով գործավարությունը շարունակելու խնդրանքով:

124. Օրենքով սահմանված ցանկացած ժամկետի լրանալու դեպքում, որի ընթացքում հայտատուն չի կատարել օրենքով նախատեսված պարտադիր գործողությունները, Գրասենյակը հայտատուին հնգօրյա ժամկետում ուղարկում է սահմանված ժամկետի խախտման մասին համապատասխան ծանուցում:

125. Հայտի նկատմամբ իրավունքների վերականգնման մասին դիմումը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտման և դրա իրավական հետևանքների մասին ծանուցումն

ուղարկելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, հայտատուն պետք է ավարտի չկատարված գործողությունը և վճարի օրենքով սահմանված պետական տուրքը: Նշված ժամկետում պահանջվող գործողությունը չկատարելու և համապատասխան պետական տուրքը չվճարելու դեպքում դիմումը համարվում է չներկայացված:

126. Գրասենյակը չի կարող բավարարել հետագա գործավարությունը շարունակելու մասին հայտատուի դիմումը, եթե դա վերաբերում է հայտի նկատմամբ իրավունքների վերականգնման մասին դիմումը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտման և դրա իրավական հետևանքների մասին ծանուցումն ուղարկելու օրվանից հետո՝ չկատարված գործողության ավարտման և օրենքով սահմանված պետական տուրքի վճարման երկամսյա ժամկետի, ինչպես նաև բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու, սահմանված ժամկետների երկարաձգման մասին, իրավունքների վերականգնման մասին, խնդրարկվող առաջնության ճշգրտման կամ լրացման մասին կամ առաջնության իրավունքի վերականգնման մասին դիմում կամ առաջին հայտի վավերացված պատճենը ներկայացնելուն կամ արտոնագիրը գործողության մեջ պահելու համար պետական տուրքերի վճարման ժամկետների խախտմանը:

127. Հետագա գործավարությունը շարունակելու մասին դիմումը չի կարող մերժվել, եթե դիմող կողմը նախապես գրավոր չի ծանուցվել դիմումի հնարավոր մերժման մասին: Ծանուցագրի ուղարկման օրվանից՝ երկամսյա ժամկետում, դիմողը պետք է ներկայացնի իր նկատառումները ծանուցագրի մեջ նշված մերժման հիմքերի վերաբերյալ:

128. Գործավարությունն իրականացնող կողմը, որը հանգամանքներից ելնելով՝ օրենքի և սույն կարգի համաձայն Գրասենյակի սահմանած ժամկետներում չի կարողացել պատշաճ կերպով կատարել իր պարտականությունները հարգելի պատճառներով, կարող է վերականգնել իր իրավունքները, եթե սահմանված ժամկետի խախտումը կապված է հայտի կամ ցանկացած դիմումի հետկանչման, մերժման կամ իրավունքից զրկելու հետ:

129. Իրավունքների վերականգնման մասին դիմումը ներկայացվում է սահմանված ժամկետի խախտման պատճառի վերացման պահից, կամ եթե կողմը հետագայում ծանուցվել է սահմանված ժամկետի խախտման մասին՝ այդ մասին ծանուցագրի ուղարկման օրվանից՝ երկամսյա ժամկետում: Դիմումը ներկայացվում է սահմանված ժամկետը լրանալուց հետո պահանջված գործողությունները կատարելու դեպքում՝ կցելով սահմանված պետական տուրքի

վճարումը հաստատող փաստաթուղթը: Իրավունքների վերականգնման մասին դիմումը պետք է լինի հիմնավորված և պարունակի փաստեր և ապացույցներ, որոնք կարդարացնեն ժամկետները չպահպանելը: Նշված պահանջների չկատարման դեպքում դիմումը համարվում է չներկայացված:

130. Իրավունքների վերականգնման մասին դիմումը չի կարող ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժվել, եթե դիմող կողմը նախապես գրավոր չի ծանուցվել նախատեսվող ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժման մասին ծանուցումն ուղարկելու օրվանից՝ եռամսյա ժամկետում, իր նկատառումները ներկայացնելու առաջարկությամբ:

131. Իրավունքների վերականգնման մասին դիմումը ներկայացվում է ոչ ուշ, քան սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, իսկ եթե դիմումը վերաբերում է իրավունքների երկարաձգման համար պետական տուրքերի չվճարմանը, ապա ոչ ուշ, քան «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված լրացուցիչ 6-ամսյա ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

132. Իրավունքների վերականգնման մասին դիմումը չի բավարարվում, եթե դա վերաբերում է սույն կարգի 129-րդ և 131-րդ կետերով սահմանված ժամկետներին բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու, առաջին հայտի վավերացված պատճենը ներկայացնելու, սահմանված ժամկետների երկարաձգման, հետագա գործավարությունը շարունակելու, խնդրարկվող առաջնության ճշգրտման կամ լրացման կամ առաջնության իրավունքի վերականգնման մասին դիմում ներկայացնելու ժամկետներին:

133. Եթե իրավունքների վերականգնման մասին դիմում ներկայացնելիս նշված չեն եղել ժամկետը բաց թողնելու պատճառները, ապա կողմն այդ տվյալները ներկայացնում է այդ մասին Գրասենյակի ծանուցագրի ուղարկման օրվանից՝ եռամսյա ժամկետում:

18. ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

134. Գրասենյակը որպես հայտ ներկայացված նյութերը քննարկում է դրանց ստանալու օրվանից սկսած՝ օրենքով և սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

135. Ներկայացված նյութերը որպես հայտ քննարկելու և այն ներկայացնելու թվականը սահմանելու նպատակով Գրասենյակն ստուգում է դրանց համապատասխանությունն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

136. Գրասենյակը սահմանում է հայտի ներկայացման թվականը, եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ ներկայացված նյութերը բավարարում են ստորև նշված պայմաններին՝

1) առկա է հիշատակում (դիմում) այն մասին, որ խնդրարկվում է արդյունաբերական դիզայնի արտոնագիր.

2) առկա են տեղեկություններ, որոնք թույլ են տալիս նույնականացնել հայտատուին (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, հայրանունը (առկայության դեպքում), ազգանունը, բնակության վայրը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում) (անհատ ձեռնարկատեր նշմամբ), հաշվառման վայրը, կազմակերպության դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը).

3) առկա է հայտում ներառված իրի կամ մի քանի իրերի կամ դրանց մի մասի արտաքին տեսքը բացահայտող լուսանկարը (լուսանկարները) կամ գրաֆիկական պատկերը (պատկերները).

4) առկա է օրենքով սահմանված պետական տուրքի (հայտը գրանցելու, հայտի նախնական փորձաքննություն անցկացնելու համար և հայտի ըստ էության փորձաքննության անցկացման համար սահմանված պետական տուրքերի) վճարման անդորրագիրը, նույնիսկ եթե վճարված գումարի չափը չի համապատասխանում օրենքով սահմանված դրույքաչափին:

137. Ներկայացված նյութերը որպես հայտ քննարկելու և այն ներկայացնելու թվականը սահմանելու նպատակով՝ դրանք ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Գրասենյակը ստուգում է դրանց համապատասխանությունը սույն կարգի 136-րդ կետով սահմանված պահանջներին:

138. Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի 136-րդ կետի սահմանված պահանջներին, ապա Գրասենյակը դրանց ստացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է հայտատուին՝ այն ուղարկելու օրվանից հետո երկամսյա ժամկետում բացակայող փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացնելու առաջարկությամբ:

139. Սույն կարգի 138-րդ կետի համաձայն պահանջված փաստաթղթերը չներկայացվելու (Գրասենյակի ծանուցումն անպատասխան թողնելու կամ պահանջված ոչ բոլոր նյութերը ներկայացնելու) դեպքում, օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Գրասենյակը հայտի

ներկայացման թվական չի սահմանում և հայտը համարում է չներկայացված, ինչի մասին ծանուցում է հայտատուին:

140. Սույն կարգի 138-րդ կետում նշված երկամսյա ժամկետում սահմանված պահանջներին համապատասխանեցված փաստաթղթերն ստանալու դեպքում՝ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Գրասենյակը հայտի ներկայացման թվականը սահմանում է դրանցից վերջինի ստացման թվականով, եթե պահանջված փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները Գրասենյակ ներկայացվել են ոչ միաժամանակ:

141. Եթե ներկայացված փաստաթղթերում բացակայում են սույն կարգի 136-րդ կետում նշված՝ հայտատուի կամ նրա ներկայացուցչի հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները, ապա Գրասենյակը հայտի ներկայացման թվական չի սահմանում և հայտը համարում է չներկայացված, ինչի մասին ծանուցում է հայտատուին:

142. Հայտի ներկայացման թվականը սահմանելուց անմիջապես հետո Գրասենյակը գրանցում է հայտը՝ դրան տալով հերթական ութանիշ համար (առաջին ավագ կարգերի չորս թվանշանները նշում են հայտի ներկայացման տարեթիվը, մնացած չորսը՝ հայտի տվյալ տարվա հերթական համարը՝ սկսելով 0001-ից, օրինակ՝ 20200087), և հայտում ներկայացված տեղեկությունները մուտքագրում է արդյունաբերական դիզայնի հայտերի հիմնապաշար:

143. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հայտի ներկայացման թվականը սահմանելուց հետո Գրասենյակը տասն աշխատանքային օրվա ընթացքում անցկացնում է հայտի նախնական փորձաքննություն:

144. Նախնական փորձաքննության ընթացքում Գրասենյակը ստուգում է դիմումի լրացման համապատասխանությունը սույն կարգի 5-րդ կետով սահմանված պահանջներին, ինչպես նաև՝

1) օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տվյալները,

2) օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված տվյալները և փաստաթղթերը:

3) օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պահանջված լրացուցիչ նյութերի բովանդակությունը (համապատասխան դեպքում), պարզելու համար, արդյոք դրանք չեն փոխում արդյունաբերական դիզայնի էությունը:

4) օրենքի 29-րդ և 30-րդ հոդվածներով նախատեսված առաջնության խնդրարկման համար սույն կարգի 94-98-րդ կետերով սահմանված պահանջների կատարումը, ինչպես նաև պետական

տուրքի վճարման անդորրագրի առկայությունը և, համապատասխան դեպքում, սահմանում է խնդրարկվող առաջնությունը.

5) հայտատուի կողմից կատարված արդյունաբերական դիզայնի դասակարգումն ըստ ԱԴՄԴ-ի (կամ կատարվում է այդպիսի դասակարգում, եթե այն չի արվել հայտատուի կողմից):

145. Նախնական փորձաքննության ընթացքում ստուգվում է նաև՝

1) դիմումում նշված հայտատուի անվան(անունի) համապատասխանությունը հայտին կից ներկայացված փաստաթղթերում նշված հայտատուի անվանը(անունին),

2) դիմումում ներկայացուցչի վերաբերյալ տվյալների առկայությունը, եթե հայտը ներկայացված է ներկայացուցչի միջոցով,

3) լիազորագրի համապատասխանությունը սույն կարգի 19-28-րդ կետերում նշված պահանջներին,

4) արդյունաբերական դիզայնի պատկերի համապատասխանությունը սույն կարգի 8-10-րդ կետերին,

5) վճարված պետական տուրքի (հայտը գրանցելու, հայտի նախնական փորձաքննություն անցկացնելու համար և հայտի ըստ էության փորձաքննության անցկացման համար սահմանված պետական տուրքերի) համապատասխանությունը սահմանված չափին,

6) դիմումում սույն կարգով նախատեսված ստորագրությունների առկայությունը,

7) «Պետական տուրքի մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն նվազեցված դրույքաչափով վճարման հիմքերի առկայությունը:

146. Եթե նախնական փորձաքննության ընթացքում պարզվում է, որ հայտում կամ լրացուցիչ նյութերում առկա են բացակայող կամ սույն կարգով սահմանված պահանջներին չհամապատասխանող մասեր կամ փաստաթղթեր, ապա Գրասենյակը հայտատուին ուղարկում է հարցում՝ ուղղված կամ բացակայող մասերը կամ փաստաթղթերը հարցումն ուղարկելու օրվանից երկամսյա ժամկետում, ներկայացնելու առաջարկությամբ: Այս դեպքում սույն կարգի 143-րդ կետով սահմանված ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև հարցման պատասխանի ստացումը, բայց ոչ ավելի, քան հարցման պատասխանի ներկայացման ժամկետի ավարտը:

147. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հայտը ներկայացնելու թվականից երկամսյա ժամկետում իր նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա հայտատուն կարող է

լրացուցիչ նյութեր ներկայացնելով ուղղումներ կամ ճշգրտումներ կատարել հայտի նյութերում՝ չփոփոխելով ներկայացված արդյունաբերական դիզայնի էությունը:

148. Օրենքի 43–րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, եթե պարզվում է, որ հայտատուի կողմից ներկայացված լրացուցիչ նյութերը համարվում են արդյունաբերական դիզայնի էությունը փոփոխող, այսինքն ներկայացվել են արդյունաբերական դիզայնի էական հատկանիշներ, որոնք բացակայել են արդյունաբերական դիզայնում ներկայացման թվականի դրությամբ, կամ ներկայացվել են արտադրանքի պատկերներ, որոնցից հեռացվել են արդյունաբերական դիզայնի էական հատկանիշներ, որոնք պատկերների վրա առկա էին հայտի ներկայացման թվականի դրությամբ, ապա դրանք փորձաքննության ընթացքում հաշվի չեն առնվում, ինչի մասին, համապատասխան հիմնավորմամբ, երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է հայտատուն:

149. Սույն կարգի 146-րդ կետում նշված հարցման մեջ հիշատակված բոլոր թերությունները սահմանված ժամկետում հայտատուի կողմից չվերացնելու դեպքում հայտը համարվում է հետ կանչված, բացառությամբ օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներում նշված դեպքերի, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

150. Եթե փորձաքննության արդյունքում պարզվում է, որ հայտը ներկայացվել է մի քանի արդյունաբերական դիզայնների համար, որոնք չեն վերաբերում ԱԴՄԴ մեկ դասին, ապա հայտատուին ուղարկվում է հարցում, որում առաջարկվում է այդ մասին հարցումն ուղարկելու օրվանից՝ երկամսյա ժամկետում, հայտնել, թե արդյունաբերական դիզայններից որը պետք է քննարկվի և անհրաժեշտ ճշգրտումներ կատարել հայտի փաստաթղթերում: Հարցումը պարունակում է տեղեկություններ, այն մասին, որ օրենքով սահմանված ժամկետում հարցման մեջ նշված անհամապատասխանությունները չվերացնելու դեպքում քննարկվելու է այն արդյունաբերական դիզայնը, որը հայտի մեջ բերված է առաջինը, ինչպես նաև, որ հայտատուն կարող է հայտը բաժանել մեկ կամ մի քանի զատված հայտ ներկայացնելու միջոցով՝ սույն կարգի 60-69-րդ կետով սահմանված կարգով:

151. Օրենքի 43-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն, եթե Գրասենյակը համարում է, որ հայտի փաստաթղթերն ու լրացուցիչ նյութերն իրենց բովանդակությամբ և ձևով համապատասխանում են օրենքով և սույն կարգով սահմանված պահանջներին, որոշում է կայացնում օրենքի 44-րդ հոդվածով սահմանված ժամկետում հայտի հրապարակման մասին, որի վերաբերյալ ծանուցում է հայտատուին:

19. ՀԱՅՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ԵՐԲՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

152. Օրենքի 43-րդ հոդվածի 13-րդ մասի և սույն կարգի 151-րդ կետի համապատասխան ընդունված հայտի հրապարակման մասին որոշման հիման վրա դրա կայացման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում Գրասենյակը հայտը հրապարակում է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում:

153. Հայտատուի դիմումի համաձայն, օրենքով սահմանված պետական տուրքի վճարման պայմանով, սույն կարգի 152-րդ կետով նախատեսված հրապարակումը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մինչև հայտը ներկայացնելու թվականից վեց ամիս լրանալը:

154. Հայտի հրապարակումից հետո ցանկացած անձ իր դիմումի համաձայն կարող է ծանոթանալ հայտի նյութերի հետ, եթե հայտի մասին տեղեկությունների հրապարակման օրվա դրությամբ հայտը հետ կանչված չէ:

155. Հայտի նյութերին ծանոթանալու մասին դիմումին պետք է կցվի՝ օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

156. Սույն կարգի 154-րդ կետում նշված դիմումը քննարկելիս Գրասենյակն այն ներկայացնելու օրվանից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի առկայությունը և վճարված պետական տուրքի չափի համապատասխանությունը սահմանվածին:

157. Առանց համապատասխան պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի առկայության սույն կարգի 154-րդ կետում նշված դիմումը համարվում է չներկայացված, ինչի մասին դիմումատուն ծանուցվում է:

158. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտի հրապարակման թվականից երկամսյա ժամկետում հայտարկված արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու դեմ օրենքի նույն հոդվածով սահմանված հիմքերով ներկայացված գրավոր առարկության մասին Գրասենյակը գրավոր ծանուցում է հայտատուին՝ նշված ծանուցագրի ուղարկման օրվանից մեկամսյա ժամկետում, իր նկատառումները ներկայացնելու առաջարկությամբ:

159. Սույն կարգի 158-րդ կետում նշված առարկությունը քննարկելիս Գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է՝ սահմանված ժամկետում առարկությունը ներկայացնելու փաստը, սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի առկայությունը և վճարված պետական տուրքի չափի համապատասխանությունը սահմանվածին:

160. Եթե առարկությունը ներկայացվել է սույն կարգի 158-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո կամ առարկությանը կից չի ներկայացվել սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, ապա առարկությունը համարվում է չներկայացված, ինչի մասին Գրասենյակը գրավոր ծանուցում է այն ներկայացնողին:

161. Սույն կարգի 158-րդ կետի համաձայն պահանջված նկատառումները հայտատուի կողմից չներկայացվելու դեպքում Գրասենյակը առարկությունը քննարկում է նկատառումները ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, առկա նյութերի հիման վրա, որպես օրենքի և սույն կարգի համաձայն հայտի՝ ըստ էության փորձաքննության նպատակներով հայտարկված արդյունաբերական դիզայնի գրանցումը մերժելու համար ի հայտ բերված հնարավոր հիմք:

162. Արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու դեմ ներկայացված առարկությունները, հաշվի առնելով դրանց վերաբերյալ հայտատուի ներկայացրած նկատառումները (ստանալու դեպքում), Գրասենյակը քննարկում է ըստ էության՝ գնահատելով դրանց հիմնավորվածությունը:

163. Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն առարկության քննարկումը կասեցվում է հետևյալ դեպքերում և ժամկետներով՝

1) հակադրվել է ավելի վաղ առաջնությամբ արդյունաբերական դիզայնի հայտ, ապա մինչև դրա վերաբերյալ վերջնական մերժման որոշման կայացումը, կամ համապատասխան դեպքում, մինչև ավելի վաղ առաջնությամբ արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալը.

2) կողմերից մեկը հիմնավորված դիմում է ներկայացրել մինչև դրա մեջ նշված ժամկետի ավարտը, բայց ոչ ավելի՝ քան երեք ամիս:

164. Առարկության քննարկման արդյունքներով Գրասենյակը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) առարկությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու մասին, եթե հայտարկված բոլոր արդյունաբերական դիզայնները կամ դրանց մի մասը արտոնագիր տալու ենթակա չեն.

2) առարկությունը մերժելու մասին:

165. Օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն կարգի 164-րդ կետում նշված որոշումները հաշվի են առնվում ներկայացված արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու մասին հայտով ըստ էության փորձաքննության արդյունքում որոշում կայացնելիս, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցվում է նաև առարկություն ներկայացնող անձը:

20. ՀԱՅՏԻ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

166. Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտի հրապարակման օրվանից եռամսյա ժամկետում Գրասենյակն անցկացնում է հայտի ըստ էության փորձաքննություն (այսուհետ (սույն մասում)՝ փորձաքննություն) սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան:

167. Փորձաքննության ժամկետի ընթացքը կասեցվում է տվյալ հայտի վերաբերյալ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան յուրաքանչյուր առարկության ստացման կապակցությամբ, օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետով: Ընդ որում, նույն հայտի վերաբերյալ մեկից ավելի առարկություն ստանալու դեպքում նշված ժամկետի կասեցման սկիզբ համարվում է դրանցից առաջինի ուղարկման թվականը, իսկ ավարտը՝ դրանցից վերջինի վերաբերյալ նկատառումների ստացման թվականը, իսկ նկատառումներ չստանալու դեպքում՝ դրա համար սահմանված ժամկետի ավարտը, եթե առաջին առարկությունից հետո ստացված առարկությունները ստացվել են մինչև դրան նախորդող առարկության վերաբերյալ նկատառումների ստացումը, իսկ նկատառումներ չստանալու դեպքում՝ մինչև դրա համար սահմանված ժամկետի ավարտը:

168. Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փորձաքննության ընթացքում Գրասենյակն ստուգում է արդյունաբերական դիզայնի համապատասխանությունն օրենքով սահմանված պահպանության պայմաններին, պարզելու համար, օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հայտարկված արդյունաբերական դիզայնի հայտի մերժման հիմքերի առկայության հարցը՝ հաշվի առնելով ներկայացված առարկությունների քննարկումների արդյունքները:

169. Մինչև արդյունաբերական դիզայնի համապատասխանությունն օրենքով սահմանված պահպանության պայմաններին ստուգելուն անցնելը Գրասենյակը՝

1) ստուգում է նաև հայտի նյութերի համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին՝ բացառությամբ այն նյութերի, որոնք սույն կարգի 144-րդ և 145-րդ կետերի համաձայն ստուգվել են նախնական փորձաքննության ընթացքում.

2) սահմանում է արդյունաբերական դիզայնի առաջնությունն Օրենքի 29-րդ և 30-րդ հոդվածներին համապատասխան, եթե այն չի սահմանվել նախնական փորձաքննության ընթացքում:

170. Սույն կարգի 169-րդ կետով նախատեսված ստուգման արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կիրառվում են սույն կարգի 146-րդ և 148-րդ կետերով նախատեսված մոտեցումները:

171. Սույն կարգի 168-րդ կետով նախատեսված ստուգման նպատակներով Գրասենյակն իրականացնում է հետևյալ գործողությունները՝

1) ի հայտ են բերվում նույնական արդյունաբերական դիզայնները, ինչպես նաև այն արդյունաբերական դիզայնները, որոնք իրենց էական հատկանիշներով համեմատելի են հայտարկվածի հետ և կարող են հիմք ծառայել տեղեկացված սպառողի վրա ընդհանուր տպավորություն թողնելու համար.

2) ստուգվում է արդյունաբերական դիզայնների նորությունն ու ինքնատիպությունը: Նորությունն ու ինքնատիպությունը ստուգելիս հաշվի է առնվում արդյունաբերական դիզայնի էական հատկանիշների համախմբությունը: Արդյունաբերական դիզայնի էական հատկանիշներին, համաձայն Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի, վերաբերում են այն առանձնահատկությունները, որոնք բնորոշում են իրի արտաքին տեսքի գեղագիտական հատկությունները, մասնավորապես՝ ձևերը, ուրվագծերը, գծերը, գույների համակցությունը, զարդանախշերը, նյութերը:

172. Սույն կարգի 173-րդ կետի դրույթներին համապատասխան, որոնման ընթացքում հաշվի են առնվում՝

1) տեղեկատվական բազաներում առկա նյութերը.

2) անհատականացման միջոցները (ապրանքային նշանները, աշխարհագրական նմուշները և այլն), որոնք պահպանություն են ստացել մինչև արդյունաբերական դիզայնի հայտ ներկայացնելու թվականը, կամ համապատասխան դեպքում՝ առաջնության թվականը.

3) հեղինակային իրավունքով պահպանվող գրականության, գիտության կամ արվեստի ստեղծագործությունների, դրանց անվանումների կամ դրանցից մեջբերումների ու հատվածների,

դրանց հերոսների վերարտադրման կամ ներառման հանգամանքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ իրավունքները ձեռք են բերվել մինչև տվյալ արդյունաբերական դիզայնի հայտ ներկայացնելու թվականը, կամ՝ առաջնության թվականը.

4) Փարիզյան կոնվենցիայի 6ter հոդվածում նշված որևէ տարր՝ առանց համապատասխան իրավասու մարմնի թույլտվության.

5) խորհրդանիշները, խորհրդանշանները, զինանշանները, որոնք այլ են, քան Փարիզյան կոնվենցիայի 6ter հոդվածով սահմանվածները, և որոնք առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հանրության համար, օրինակ, Սարդարապատի հուշահամալիրի պատկերը, Արցախի խորհրդանիշը հանդիսացող «Պապի ու տատի» հուշարձանը և այլն:

173. Տեղեկատվական բազաները բաղկացած են՝

1) Հայաստանի Հանրապետությունում ազգային ընթացակարգով ներկայացված ավելի վաղ առաջնության թվական ունեցող արդյունաբերական դիզայնների հայտերից, որոնց վերաբերյալ մերժման կամ հետ կանչման որոշում չի կայացվել.

2) Հայաստանի Հանրապետության արդյունաբերական դիզայնների արտոնագրերից.

3) Հաագայի համաձայնագրի ընթացակարգին համապատասխան ներկայացված ավելի վաղ առաջնության թվական ունեցող միջազգային հայտերից.

4) Եվրասիական հայտերից, որոնք ներկայացվել են Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ սկսած դրանց հրապարակման թվականից:

174. Որոնման ընթացքում օգտագործվում են նաև տրամադրության տակ գտնվող բոլոր տեղեկությունները և տեղեկատվական միջոցները, այդ թվում՝ համացանցը:

175. Սույն կարգի 171-րդ կետի 1-ին ենթակետով նշված պահանջների ստուգումից հետո ստուգվում է արդյունաբերական դիզայնի նորությունը: Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն նորության ստուգման ժամանակ արդյունաբերական դիզայնը ճանաչվում է նոր, եթե չի հայտնաբերվել է մեկ այլ իր, որի արտաքին տեսքը վերարտադրված է ներկայացված արդյունաբերական դիզայնում, կամ ներկայացված արդյունաբերական դիզայնի էական հատկանիշների համախմբությունը հայտնի չէ մինչև դրա առաջնության թվականը աշխարհում հանրամատչելի դարձած որևէ տեղեկատվական աղբյուրում: Այստեղ հաշվի է առնվում այն

հանգամանքը, որ խոսքը վերաբերում է այդ էական հատկանիշների միաժամանակյա առկայությանը, այլ ոչ թե՝ առանձին–առանձին, տարբեր իրերում:

176. Եթե ներկայացված արդյունաբերական դիզայնը համալիր իր է, ապա նորության փորձաքննությունն իրականացվում է ինչպես ամբողջ համալիրի, այնպես էլ դրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր իրի նկատմամբ:

177. Եթե պարզվում է, որ համալիրի մեջ մտնող որևէ իր չի համապատասխանում նորության պահանջին, ապա այդ մասին ծանուցվում է հայտատուն՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երկամսյա ժամկետում իր նկատառումները ներկայացնելու առաջարկությամբ:

178. Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ հայտը համապատասխանում է նորության պահանջին, անցկացվում է ինքնատիպության պայմանի համապատասխանության փորձաքննություն: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն արդյունաբերական դիզայնն ինքնատիպ է, եթե տեղեկացված սպառողի վրա թողած ընդհանուր տպավորությունը տարբերվում է ցանկացած այլ արդյունաբերական դիզայնի թողած ընդհանուր տպավորությունից:

179. Արդյունաբերական դիզայնը բնութագրող էական հատկանիշները չեն ճանաչվում որպես իրի ստեղծագործական մաս հետևյալ դեպքերում՝

1) հայտարկված արդյունաբերական դիզայնի էական հատկանիշների համախմբությունը, որն արտացոլվում է իրի արտաքին տեսքի պատկերներում, տեղեկացված սպառողի վրա թողնում է նույն ընդհանուր տպավորությունը, որը թողնում է նույն կամ նման նշանակություն ունեցող հայտնի իրի էական հատկանիշների համախմբությունը: Սույն կարգի նպատակներով տեղեկացված սպառող ասելով պետք է հասկանալ ենթադրյալ անձ, որը հետաքրքրություն է ցուցաբերում նույն կամ նման նշանակություն ունեցող իրերի նկատմամբ, որում մարմնավորված է արդյունաբերական դիզայնը, և որպես արդյունք, նա գիտի, թե սովորաբար այդպիսի իրերի արտաքին տեսքը ինչպիսի հատկանիշներ ունեն: Որպես տեղեկացված սպառող փորձաքննություն անցկացնելիս գնահատումն իրականացնում է փորձաքննության ստորաբաժանման փորձագետը: Հայտարկված և հակադրված արդյունաբերական դիզայնների թողած ընդհանուր տպավորությունը համեմատելիս նկատի են առնվում նույն կամ նման իրերի արտաքին տեսքը բնորոշող հայտնի լուծումների մասին բոլոր տեղեկությունները (անալոգային շարքեր) և հաշվի են առնվում հեղինակների հնարավորությունների սահմանափակումները նույն նպատակի համար նախատեսված

իրի արտաքին տեսքի լուծումների մշակման ժամանակ, մասնավորապես՝ իրի կամ դրա մի մասի տեխնիկական գործառույթի հետ կապված (հեղինակի ազատության աստիճան):

2) Արդյունաբերական դիզայնի էական հատկանիշների համախմբությունը, որն արտացոլված է իրի արտաքին տեսքի պատկերներում, բնութագրում է իրի արտաքին տեսքի լուծումը որպես լուծում, որն իրենից ներկայացնում է՝

ա. Պարզ երկրաչափական մարմնի տեսք ունեցող, այն է՝ շրջան, օղակ, բազմանկյուն, գունդ, կոն, բուրգ, պրիզմա, զուգահեռանիստ և այլն, իրերի ստեղծում՝ առանց որևէ փոփոխություն կատարելու այդ երկրաչափական մարմիններում.

բ. Որոշակի նշանակության իրերին բնորոշ ձևի կրկնօրինակում, և (կամ) այլ նյութերի օգտագործում, մասնավորապես՝ հայտնի իրի արտաքին տեսքի ընդօրինակման նպատակով (օրինակ՝ պոլիմերային (արհեստական) նյութից պատրաստված իր, որն ընդօրինակում է իր, որն ավանդաբար պատրաստվում է փայտից կամ այլ բնական նյութերից).

գ. Այլ նպատակ և այլ անձի հայտնի իրերի արտաքին տեսքի պատճենահանում (օրինակ՝ խաղալիք «մեքենա» մշակելիս պատճենահանվել է հայտնի մեքենայի մոդելների արտաքին տեսքի լուծումը), ճարտարապետական կառույցներ, բնական օբյեկտներ (օրինակ՝ Ամանորի արհեստական ծառի լուծման մեջ պատճենահանվել է բնական եղևնու արտաքին տեսքը) և այլն, առանց ոճավորման և վերամշակման.

դ. Հավաքածուների կազմման մեջ, որոնք բաղկացած են առանձին հայտնի իրերից՝ առանց դրանց տեսքը փոխելու:

3) Արդյունաբերական դիզայնի էական հատկանիշների համախմբությունը, որն արտացոլվում է իրի արտաքին տեսքի պատկերներում, տարբերվում է նույն կամ նման նշանակության հայտնի իրի արտաքին տեսքի էական հատկանիշների համախմբությունից միայն այն առանձնահատկություններով, որոնք ստեղծված են հետևյալի հաշվին՝

ա. Իրի չափերի (մասշտաբի) փոփոխության՝ պահպանելով դրա բոլոր մյուս հատկանիշները (ձևերը, բաղադրիչ մասերի և (կամ) տարրերի համամասնությունները, գունային լուծումները և այլն).

բ. Ամբողջ իրի միայն գույնը փոխելու, բայց առանց գունային լուծում տալու.

գ. Միայն նույնատիպ տարրերի քանակը փոխելու՝ առանց կառուցվածքի փոփոխության կամ իրի արտաքին տեսքի հորինվածքի մեջ դրանց տեղակայման համակարգերը փոխելու և իրի արտաքին տեսքի գեղագիտական առանձնահատկությունների վրա առանց այդ փոփոխության ազդեցության:

4) Արդյունաբերական դիզայնի էական հատկանիշների համախմբությունը, որն արտացոլվում է իրի արտաքին տեսքի պատկերներում, տարբերվում է նույն կամ նման նշանակություն ունեցող հայտնի իրի էական հատկանիշների համախմբությունից մեկ կամ մի քանի էական հատկանիշ-ներով, իսկ հանրամատչելի տեղեկատվություններից բացահայտված են այնպիսի լուծումներ, որոնք պարունակում են հատկանիշներ, որոնք համընկնում են հայտարկված արդյունաբերական դիզայնի վերը նշված էական տարբերակիչ հատկանիշների հետ և պայմանավորված են հայտնի լուծման մեջ դրա արտաքին տեսքի նույն գեղագիտական և(կամ) էրգոնամիկ հատկությունների առկայությամբ, որոնք բնորոշ են հայտարկված արդյունաբերական դիզայնին:

180. Փորձաքննության ընթացքում Գրասենյակն իրավունք ունի հայտատուից պահանջել ցանկացած տեղեկություն, որը համարում է անհրաժեշտ հայտատուին կամ հեղինակին անհատականացնելու, հայտը ճիշտ լրացնելու, պահպանության պայմաններին համապատասխա-նեցումն ապահովելու համար, առանց որոնց անհնարին է փորձաքննության անցկացումը: Տեղեկությունը հայտատուի կողմից ներկայացվում է ծանուցումն ուղարկելու օրվանից՝ երկամսյա ժամկետում և չպետք է փոխի արդյունաբերական դիզայնի էությունը:

181. Լրացուցիչ նյութերը համարվում են արդյունաբերական դիզայնի էությունը փոխող, եթե պատկերներին նոր տարրեր են ավելացվում, փոխվում են գույները կամ որևէ այլ կերպ փոխվում է արդյունաբերական դիզայնի պահպանության ծավալը:

182. Այն դեպքում, երբ լրացուցիչ նյութերը փոխում են հայտի էությունը, հայտատուն ծանուցվում է այդ մասին նախքան արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու կամ մերժելու մասին որոշման կայացնելը:

183. Սահմանված ժամկետում պատասխանը կամ սահմանված ժամկետի երկարաձգման դիմումը չներկայացնելու դեպքում հայտը համարվում է հետկանչված՝ պայմանով, որ առանց պահանջված տեղեկության փորձաքննություն անցկացնելն անհնարին է, որի մասին ծանուցվում է հայտատուն:

184. Փորձաքննության ընթացքում քննարկվում են երրորդ անձանցից ստացված առարկություն-ները: Եթե դրանք բավարարվում են ամբողջությամբ կամ մասնակի, ապա առարկությունը հիմք է հանդիսանում արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալը ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու համար:

185. Եթե փորձաքննության արդյունքում պարզվում է, որ արդյունաբերական դիզայնը համապատասխանում է պահպանունակության պահանջներին, ապա որոշում է կայացվում արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու մասին:

186. Եթե փորձաքննության արդյունքում պարզվում է, որ ներկայացված արդյունաբերական դիզայններից միայն մի մասն է համապատասխանում պահպանունակության պայմաններին, ապա Գրասենյակը արտոնագիր տալու մասին որոշում է կայացնում միայն տվյալ մասի նկատմամբ:

187. Եթե փորձաքննության արդյունքում պարզվում է, որ ներկայացված արդյունաբերական դիզայնը վերաբերում է օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասին, ապա Գրասենյակը կայացնում է արտոնագիր տալը մերժելու մասին որոշում՝ բերելով այն փաստարկները, որոնք հիմք են ծառայել նշված որոշումն ընդունելու համար:

188. Օրենքի 47-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, Գրասենյակը մինչև արտոնագիր տալն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու մասին որոշման հրապարակումը հայտատուին ուղարկում է ծանուցում՝ նշելով այն փաստարկները, որոնք կարող են այդ արդյունաբերական դիզայնի գրանցումն ամբողջությամբ կամ մասնակի մերժման հիմք հանդիսանալ, անհրաժեշտու-թյան դեպքում դրան կցելով համապատասխան տեղեկատվության աղբյուրների վկայակոչումներ, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երկամսյա ժամկետում ներկայացնել իր նկատառումները (փոփոխություններ կատարել հայտի մեջ կամ փաստարկներ ներկայացնել արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու օգտին փորձաքննության արդյունքի մասին):

189. Եթե հայտատուն սահմանված ժամկետում ներկայացնում է իր նկատառումները դիմումի մերժման վերաբերյալ կամ ճշգրտում է իր դիմումը, ապա հայտատուի ներկայացված փաստարկները Գրասենյակը քննարկում է դրանք ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում և, անհրաժեշտության դեպքում, մինչև որոշման կայացումը ամբողջությամբ կամ մասնակիորեն ճշգրտում է մերժման մասին որոշման հիմքերը:

190. Սահմանված ժամկետում ծանուցումն անպատասխան թողնելու և այդ ընթացքում նշված ժամկետը երկարաձգելու մասին դիմում չներկայացվելու դեպքում՝ ծանուցմանը համապատասխան ներկայացված արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալը մերժվում է, կամ գրանցումը կատարվում է մասնակի կամ իրավունքի սահմանափակմամբ:

21. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՏԱԼԸ

191. Օրենքի 48-րդ հոդվածի 1-րդ մասի 1-ին կետի համաձայն արդյունաբերական դիզայնին արտոնագիր տալու մասին որոշման հիման վրա, սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրն ստանալու օրվանից տասը աշխատանքային օրվա ընթացքում Գրասենյակը գրանցում է արդյունաբերական դիզայնը արդյունաբերական դիզայնի պետական գրանցամատյանում՝ տալով հերթական համար:

192. «Պետական տուրքի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու համար պետական տուրքը վճարվում է արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու մասին որոշումն ուղարկելուց հետո՝ եռամսյա ժամկետում, կամ եթե հայտատուն այդ որոշմանը չհամաձայնելով դիմել է բողոքարկման խորհուրդ կամ դատարան, ապա՝ բողոքարկման խորհրդի որոշումը կամ դատարանի վճիռն ուղարկելուց հետո՝ եռամսյա ժամկետում: Նշված պետական տուրքը կարող է վճարվել նաև այդ ժամկետը լրանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, որի դեպքում դրա չափն ավելացվում է 50 տոկոսով: Նշված ժամկետներում պետական տուրքը չվճարելու և այդ վճարման անդորրագիրը սահմանված ժամկետում (առավելագույնը 3 ամիս գումարած 10 օր, եթե պետական տուրքը վճարված է 3 ամսվա ընթացքում և 9 ամիս գումարած 10 օր, եթե պետական տուրքը վճարված է 3 գումարած 6 ամսվա ընթացքում) Գրասենյակ չներկայացնելու դեպքում պետական տուրքը համարվում է չվճարված, արդյունաբերական դիզայնի արտոնագիր չի տրվում, հայտը համարվում է հետ կանչված՝ արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու մասին որոշումը հայտատուի կողմից ստանալուց հետո՝ երեք ամիսը լրանալու հաջորդ օրվանից:

22. ՀԱՅՏԵՐՈՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

193. Որպես հայտ Գրասենյակում ստացված նյութերը մուտքագրվում են հիմնապաշար, դրանց տրվում է մտից համար ու նշվում է ստացման թվականը:

194. Առձեռն հանձնված հայտն ընդունվում է և տրվում է ստացական, որում նշվում է հայտատուն, հայտարկված արդյունաբերական դիզայնի անվանումը, ԱԴՄԴ դասերը (նշված լինելու դեպքում), հայտի նյութերի թերթերի ընդհանուր թիվը, ինչպես նաև ստացման թվականը և մտից համարը, որը, որպես արդյունաբերական դիզայնի հայտ ստացված նյութի հերթական համարն է:

195. Հայտերի էլեկտրոնային ընդունման համակարգի միջոցով ստացված հայտի մտից համարը և ստացման թվականն ամրագրվում են համակարգչային ծրագրով:

196. Որպես հայտ ստացված նյութերը քննարկվում են Գրասենյակի համապատասխան ստորաբաժանման կողմից (այսուհետ՝ փորձաքննության ստորաբաժանում)՝ սույն կարգի 134-141-րդ կետերին համապատասխան: Քննարկումն իրականացնում է փորձաքննության ստորաբաժանման արդյունաբերական դիզայնի փորձագետը (այսուհետ՝ փորձագետ)՝ տվյալ ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ:

197. Սույն կարգի 136-րդ կետին համապատասխան հայտը ներկայացնելու թվականը սահմանելուց հետո, փորձաքննության ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ, տվյալ ստորաբաժանման փորձագետը սույն կարգի 142-րդ կետին համապատասխան գրանցում է հայտը՝ դրան տալով հերթական համար, և հայտում ներկայացված տեղեկությունները մուտքագրում է արդյունաբերական դիզայնի հայտերի հիմնապաշար:

198. Հայտի նախնական փորձաքննությունն իրականացնում է փորձաքննության ստորաբաժանման փորձագետը՝ տվյալ ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ, սույն կարգի 143-151-րդ կետերին համապատասխան:

199. Հայտի ըստ էության փորձաքննությունն իրականացնում է փորձաքննության ստորաբաժանման փորձագետը՝ տվյալ ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ, սույն կարգի 166-190-րդ կետերին համապատասխան, ինչպես նաև իրականացնում է սույն կարգի 149-162-րդ կետերի հետ կապված անհրաժեշտ գործառույթները:

200. Սույն կարգի 196-րդ կետին համապատասխան իրականացվող հայտի նյութերի քննարկման և 197-199-րդ կետերին համապատասխան իրականացվող փորձաքննության արդյունքների հիման վրա Գրասենյակի որոշումները և ծանուցումները կայացվում են տվյալ հայտի նյութերի քննարկումը կամ հայտի փորձաքննությունն իրականացնող փորձագետի նախապատրաստած համապատասխան նախագծի հիման վրա:

201. Սույն կարգի համաձայն ծանուցումների նախագծերը նախապատրաստում է փորձագետը և ներկայացնում է փորձաքննության ստորաբաժանման ղեկավարին:

202. Սույն կարգի համաձայն հայտի փորձաքննության արդյունքներով որոշումների նախագծերը նախապատրաստում է փորձագետը և ներկայացնում է փորձաքննության ստորաբաժանման ղեկավարին:

203. Օրենքի և սույն կարգի համաձայն հայտը հետկանչված համարելու մասին որոշումները, որոնցում նշվում են դրա հիմքերը, նախապատրաստվում են սույն կարգի 199-րդ կետի դրույթների համաձայն:

204. Փորձաքննության ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված որոշման նախագծերը, բացառությամբ սույն կարգի 151-րդ կետում նշվածի, ներկայացվում են Գրասենյակի պետի (կամ նրա հանձնարարությամբ՝ նրա տեղակալի) հաստատմանը:

205. Սույն կարգի 201-րդ կետում նշված ծանուցման մեջ պարտադիր նշվում են հայտատուն, հայտի համարը և հայտի ներկայացման թվականը:

206. Արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու մասին որոշման մեջ նշվում են՝

1) հայտատուն և նրա գտնվելու վայրը (բնակության վայրը).

2) հեղինակը (եթե նա չի հրաժարվել որպես այդպիսին հայտում նշված լինելուց).

3) հայտի համարը.

4) հայտը ներկայացնելու թվականը.

5) արդյունաբերական դիզայնի պատկերը (պատկերները).

6) միջազգային կամ ցուցահանդեսային առաջնությանը վերաբերող տվյալները (առկայության դեպքում).

7) ԱԴՄԴ-ի դասը:

207. Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի համաձայն արդյունաբերական դիզայնի հայտում նշված բոլոր դիզայններին կամ դրանց մի մասի համար արտոնագիր տալու մասին որոշման ընդունման դեպքում Գրասենյակը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է հայտատուին կամ նրա ներկայացուցչին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից եռամսյա ժամկետում արդյունաբերական դիզայնի արտոնագիր տալու համար օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու և վճարման անդորրագիրը ներկայացնելու անհրաժեշտության մասին:

23. ՎՃԱՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

208. Հայտի նյութերում ստուգվում է սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերի առկայությունը:

209. Պետական տուրքերի վճարման ստուգման ժամանակ ստուգվում է հետևյալը՝

1) վճարման վավերապայմանների (ռեկվիզիտների) ճշտությունը,

2) գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով Գրասենյակը հավաստիանում է պետական տուրքի վճարման մասին,

3) վճարված գումարի համապատասխանությունը սահմանված չափին,

4) նվազեցված դրույքաչափով վճարելու դեպքում՝ աշխատողների թվի մասին տեղեկանքի առկայությունը և վճարված գումարի համապատասխանությունը պետական տուրքի զեղչված չափին: Նշված տեղեկանքը պետք է ստորագրված լինի կազմակերպություն հանդիսացող հայտատուի ղեկավարի կողմից, կամ կազմակերպության կանոնադրությամբ, կամ հայտատուի կողմից տրված լիազորագրով համապատասխան իրավասություն ունեցող անձի կողմից:

210. Եթե սույն կարգի 209-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ստուգման ժամանակ օրենքով սահմանված պետական տուրքի վճարման մասին տվյալը չի հայտնաբերվում համապատասխան համակարգում, ապա հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ծանուցում՝ տվյալ վճարման իսկությանը վերաբերող ապացույցները ծանուցումն ուղարկելու օրվանից երկամսյա ժամկետում Գրասենյակ ներկայացնելու առաջարկությամբ:

211. Եթե սույն կարգի 209-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված ստուգման ժամանակ պարզվում է, որ պետական տուրքը չի համապատասխանում սահմանված չափին, ապա հայտատուին առաջարկվում է այդ մասին ծանուցագրի ստացման օրվանից երկամսյա ժամկետում կատարել պետական տուրքի լրավճարում:

212. Եթե սույն կարգի 209-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ստուգման ժամանակ պարզվում է, որ բացակայում է տեղեկանքը, ապա հայտատուին առաջարկվում է այդ մասին ծանուցումն ուղարկելու օրվանից երկամսյա ժամկետում ներկայացնել այն կամ, համապատասխան դեպքում, կատարել պետական տուրքի լրավճարում և անդորրագիրը ներկայացնել Գրասենյակ:

213. Սույն կարգի 210-212-րդ կետերով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում հայտը համարվում է հետ կանչված կամ խնդրարկվող գործողությունը մերժվում է, ինչի մասին ծանուցվում է հայտատուն:

24. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

214. Արդյունաբերական դիզայնի պահպանության մասին Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին Հաագայի համաձայնագրի ժնևյան ակտի (այսուհետ՝ Հաագայի համաձայնագիր) 3-րդ հոդվածի և օրենքի 68-րդ հոդվածի համաձայն ցանկացած անձ, ով Հայաստանի Հանրապետության քաղաքացի է կամ ունի մշտական կամ սովորական բնակության վայր կամ իրական և գործող արդյունաբերական կամ առևտրային ձեռնարկություն Հայաստանի Հանրապետության տարածքում, ունի միջազգային հայտ ներկայացնելու իրավունք:

215. Օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն արդյունաբերական դիզայնի միջազգային հայտը կարող է ներկայացվել Գրասենյակի միջոցով: Միջազգային հայտը, որին կցվում է սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, Գրասենյակ ներկայացնում է հայտատուն անձամբ կամ Գրասենյակում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով, անգլերենով: Միջազգային հայտին կցվում են նաև Հաագայի համաձայնագրով նախատեսված Միջազգային բյուրոյի հաշվին վճարված գումարների վճարումը հաստատող փաստաթուղթը:

216. Միջազգային հայտը և դրան կից փաստաթղթերը Գրասենյակ ներկայացվում են երկու օրինակից՝ տպագրված և էլեկտրոնային տարբերակներով, որոնք բավարարում են

Հաագայի համաձայնագրի 5-րդ հոդվածով, Հաագայի համաձայնագրի 1999թ ակտի և 1960թ. Ակտի ընդհանուր հրահանգի (այսուհետ՝ Ընդհանուր հրահանգ) 7-12-րդ կանոններով և սույն կարգի 217-րդ կետով սահմանված պահանջները:

217. Միջազգային հայտը լրացվում է Ընդհանուր հրահանգի 7-րդ կանոնի համաձայն: Միջազգային հայտը, որը կարող է վերաբերի մեկ կամ մի քանի արդյունաբերական դիզայնի՝ պայմանով, որ դրանք վերաբերում են ԱԴՄԴ մեկ դասին, ներկայացվում է համապատասխան ձևաթղթի վրա (DM/1):

218. Միջազգային հայտն ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննության ստորաբաժանման ղեկավարի հանձնարարությամբ փորձագետն ստուգում է հայտի համապատասխանությունը սույն կարգի 216-217-րդ կետերի պահանջներին, ինչպես նաև միջազգային հայտում նշված տեղեկությունների համապատասխանությունը պետական գրանցամատյանի տվյալներին կամ համապատասխան դեպքերում՝ արդյունաբերական դիզայնի հայտերի հիմնապաշարի տվյալներին, եթե միջազգային հայտը ներկայացված է ազգային հայտի հիման վրա:

219. Եթե միջազգային հայտը ներկայացվում է Գրասենյակի միջոցով, Գրասենյակը ծանուցում է այդ մասին հայտատուին դիմումը ստանալու թվականի մասին: Միջազգային հայտը Միջազգային բյուրո փոխանցելուն զուգահեռ, Գրասենյակը Միջազգային բյուրոյին տեղեկացնում է դիմումը ստանալու թվականը: Գրասենյակը հայտատուին տեղեկացնում է, որ միջազգային հայտը փոխանցել է Միջազգային բյուրո:

220. Միջազգային գրանցման թվական Հաագայի համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով համարվում է միջազգային հայտի ներկայացման թվականը:

221. Ընդհանուր հրահանգի 13(3)-րդ կանոնի և Օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Գրասենյակի միջոցով միջազգային հայտի ներկայացման թվական է համարվում միջազգային հայտը Գրասենյակ ներկայացնելու թվականը՝ պայմանով, որ Միջազգային բյուրոն հայտն ստացել է այդ թվականից սկսած մեկամսյա ժամկետում: Այլ դեպքում միջազգային հայտի ներկայացման թվական կհամարվի Միջազգային բյուրոյի կողմից միջազգային հայտի ստացման թվականը:

25. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՆՈՒՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

222. Հաագայի Համաձայնագրի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, միջազգային գրանցման միջոցով Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական դիզայնի իրավական պահպանությունը տրամադրվում է միջազգային գրանցման մասին Միջազգային բյուրոյի ծանուցումներին համապատասխան Գրասենյակի անցկացրած փորձաքննության արդյունքների հիման վրա:

223. Փորձաքննությունը, որի ընթացքում ստուգվում է միջազգային գրանցման համապատասխանությունը Օրենքի 28-րդ հոդվածի պահանջներին, Գրասենյակն անցկացնում է սույն կարգի 154-165-րդ և 166-190-րդ կետերով սահմանված կարգը մութաթիս մութանդիս (mutatis mutandis) կիրառելով՝ հաշվի առնելով սույն կարգի 200-204-րդ կետերի պահանջները:

224. Սույն կարգի 222-223-րդ կետերին համապատասխան՝ Գրասենյակը փորձաքննությունն անցկացնում և ընդունած որոշման մասին Միջազգային բյուրոյին ծանուցում է վեց ամսվա ընթացքում:

225. Եթե օրենքով սահմանված պահպանության տրամադրման պայմանները բավարարված չեն միջազգային գրանցման առարկա հանդիսացող արդյունաբերական դիզայններից մեկի կամ բոլորի նկատմամբ, ապա Գրասենյակը մասնակիորեն կամ ամբողջապես մերժում է միջազգային գրանցման գործողությունը:

26. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՔՈՒՄԸ

226. Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից արձանագրության (այսուհետ՝ այս գլխում Արձանագրություն) 13(2)-րդ հոդվածի և օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Գրասենյակը կատարում է գործառույթներ, որոնք կապված են Արձանագրության ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (այսուհետ՝ այս գլխում Գերատեսչություն) ներկայացվող եվրասիական հայտի ներկայացման, մշակման և առաքման հետ: Գրասենյակը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

227. Արձանագրության 13(2)-րդ հոդվածի և օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն եվրասիական հայտը կարող է ներկայացվել Գրասենյակ, եթե հայտատուներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի բնակության կամ գտնվելու վայր:

228. Ցանկացած անձ, որն ունի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող արդյունաբերական կամ առևտրային ձեռնարկություն, համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակության կամ գտնվելու վայր ունեցող անձ:

229. Գրասենյակի միջոցով եվրասիական հայտը Գերատեսչություն առաքելու դեպքում հայտատուն պետք է ներկայացնի դիմում՝ կցելով Արձանագրության 13(3)-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն եվրասիական հայտի մշակման և առաքման համար սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը:

230. Համաձայն Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգի (այսուհետ՝ այս գլխում Հրահանգ) 102(2)-րդ կանոնի 2-րդ պարբերության, եվրասիական հայտի բոլոր փաստաթղթերը ներկայացվում են երկու օրինակով, որոնցից մեկն առաքվում է Գերատեսչություն, իսկ մյուսը պահվում է Գրասենյակում: Եվրասիական հայտի օրինակների քանակի նկատմամբ ներկայացված պահանջը չի տարածվում եվրասիական հայտը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքերի վրա:

231. Եվրասիական հայտը պարունակում է և հայտին կցվում են Հրահանգ 93 (2)-րդ կանոնով նախատեսված փաստաթղթերը (մեկ օրինակից):

232. Մեկ օրինակով են ներկայացվում նաև այլ փաստաթղթերը, այդ թվում՝ ուղեկցող նամակը, տուրքերի հաշվարկի ցուցակը և այլն:

233. Եվրասիական հայտի դիմումը ներկայացվում է ռուսերեն, իսկ մյուս փաստաթղթերը ներկայացվում են ռուսերեն կամ հայերեն: Եթե փաստաթղթերը ներկայացվում են ոչ ռուսերեն, ապա կցվում է դրանց ռուսերեն թարգմանությունը:

234. Գրասենյակը եվրասիական հայտի ներկայացման թվականը սահմանում է Արձանագրության 13-րդ հոդվածի համապատասխան հայտը Գրասենյակի կողմից ստանալու թվականով, եթե եվրասիական հայտը այդ թվականի դրությամբ պարունակում է՝

1) լրացված դիմում.

2) իրի արտաքին տեսքն ամբողջություն, որը տալիս է ամբողջական պատկերացում արդյունաբերական նմուշի էական հատկանիշների մասին:

235. Եթե նշված փաստաթղթերը Գրասենյակ ներկայացվել են ոչ միաժամանակ, ապա եվրասիական հայտի ներկայացման թվականը սահմանվում է բացակայող փաստաթղթերից վերջինի ստացման թվականով:

236. Եթե հայտի ներկայացման թվականը սահմանելիս Գրասենյակը գտնում է, որ հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին, ապա անհապաղ ծանուցում է հայտատուին այդ մասին՝ ծանուցման ուղարկման օրվանից չորս ամսվա ընթացքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

237. Եթե նշված ժամկետում հայտատուն չի կարող ներկայացնել պահանջված փաստաթղթերը, եվրասիական հայտը համարվում է չներկայացված, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

238. Գրասենյակը սահմանում է եվրասիական հայտի ներկայացման թվականը և հայտատուին տրամադրում է եվրասիական հայտը ստանալու մասին տեղեկանք, որում նշում է՝ հայտի ներկայացման թվականը, Գրասենյակում գրանցման համարը, արդյունաբերական նմուշի անվանմանը և հայտատուին կամ նրա ներկայացուցչին, եթե նա նշանակված է, վերաբերող տեղեկությունները:

239. Գրասենյակն ստուգում է Հրահանգի 101(1)-րդ կանոնի համաձայն եվրասիական հայտի ներկայացման թվականի սահմանման համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, ինչպես նաև հայտին կից փաստաթղթերի առկայությունը:

240. Եթե Եվրասիական հայտը համապատասխանում է Հրահանգի 101(1)-րդ կանոնով սահմանված պահանջներին, Գրասենյակը՝ Արձանագրության համաձայն եվրասիական հայտի մշակման և առաքման համար սահմանված պետական տուրքի վճարման դեպքում, Գրասենյակի կողմից դրա ստացման օրվանից մեկ ամսվա ընթացքում հայտի մեկ օրինակն առաքում է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն, պայմանով, որ եվրասիական հայտը ներկայացվում է արդյունաբերական նմուշն օտարերկրյա պետություններում արտոնագրելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի համաձայն:

241. Գրասենյակի և հայտատուի միջև տարաձայնության դեպքում, որը կապված չէ եվրասիական հայտի մշակման և առաքման համար սահմանված պետական տուրքի և ազգային

օրենսդրության պահանջների կատարման հետ, եվրասիական հայտը առաքվում է Գերատեսչություն:

242. Եթե Եվրասիական հայտը ընդունվում է քննարկման, հայտատուն ծանուցվում է Եվրասիական հայտի ներկայացման թվականի սահմանման մասին:

243. Գրասենյակը հայտատուին ուղարկում է ծանուցում իր եվրասիական հայտը Գերատեսչություն առաքելու և Արձանագրության 13(3)-րդ հոդվածի համաձայն Եվրասիական արտոնագրային գերատեսչությանը միասնական ընթացակարգային տուրքի վճարման անհրաժեշտության մասին:

244. Միասնական ընթացակարգային տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը հայտատուն պետք է ներկայացնի Գերատեսչություն սույն կարգի 243-րդ կետում նշված ծանուցումը Գրասենյակի կողմից նրան ուղարկելու օրվանից եռամսյա ժամկետում:

245. Սույն կարգի 240-րդ և 241-րդ կետերի համաձայն առաքված հայտը ստանալուց հետո՝ Գերատեսչությունը անհապաղ տեղեկացնում է հայտատուին դրա մասին՝ նշելով իր կողմից եվրասիական հայտի ստացման օրը:

246. Եվրասիական հայտը համարվում է չներկայացված, եթե այն Գերատեսչության կողմից չի ստացվել մինչև՝ Գրասենյակի կողմից եվրասիական հայտն ստանալու օրվանից տասնչորսերորդ ամսվա ավարտը:

247. Այս դեպքում միասնական ընթացակարգային տուրքը վերադարձվում է հայտատուին՝ հանած Գերատեսչության կողմից կատարված ծախսերը:

27. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԱՅՏԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

248. Արձանագրության 17-րդ հոդվածի համաձայն եվրասիական հայտը, որով Եվրասիական արտոնագրային գերատեսչությունը կայացրել է արտոնագիր տալը մերժելու մասին որոշում, կամ մերժել է այդ որոշման դեմ առարկության բավարարումը, կարող է փոխակերպվել Հայաստանի Հանրապետության արդյունաբերական դիզայնի արտոնագիր ստանալու հայտի՝ հայտատուի խնդրագրի հիման վրա:

249. Եվրասիական հայտը ազգային հայտի փոխակերպման մտադրության մասին խնդրագիրը հայտատուն պետք է ներկայացնի Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ սույն կարգի 248-րդ կետում նշված որոշումները ստանալու թվականից վեց ամսվա ընթացքում, վճարելով սահմանված տուրքը:

250. Եվրասիական արտոնագրային գերատեսչությունը սահմանված տուրքի վճարումը ստանալուց հետո՝ անհապաղ առաքում է Գրասենյակ հայտի ներկայացման թվականի դրությամբ եվրասիական հայտի նյութերի վավերացված պատճենը և հայտատուի համապատասխան խնդրագրի պատճենը:

251. Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի և սույն կարգի համաձայն, Եվրասիական արտոնագրային գերատեսչությունից եվրասիական հայտի վավերացված պատճենն ստանալու օրվանից Գրասենյակն սկսում է փոխակերպված հայտի քննարկումը:

252. Գերատեսչությունը հայտատուին ծանուցում է եվրասիական հայտի վավերացված պատճենն ուղարկելու փաստի մասին, ինչպես նաև առաջարկում է եվրասիական հայտի վավերացված պատճենը Գրասենյակի կողմից ստանալու օրվանից երկամսյա ժամկետում ներկայացնել օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներով սահմանված հայտի անհրաժեշտ նյութերը, այդ թվում՝ օրենքով նախատեսված արդյունաբերական դիզայնի արտոնագիր ստանալու մասին դիմումը, հայտ ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, եվրասիական հայտի նյութերի հայերեն թարգմանությունը և այլ անհրաժեշտ փաստաթղթերը:

253. Փոխակերպված հայտը համարվում է Հայաստանի Հանրապետության արդյունաբե-րական դիզայնի արտոնագիր ստանալու ճիշտ ձևակերպված ազգային հայտ, որն ունի եվրասիական հայտի ներկայացման թվականը և առաջնության թվականը (եթե այն սահմանված է):

Ձև N 1

	ԴԻՄՈՒՄ **արդյունաբերական դիզայնի արտոնագիր ստանալու մասին**	**ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակ** *Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3*	
1	*Հայտի ստացման թվականը և մտից №*		
	21 *Հայտի պետական գրանցման №*		
	22 *Հայտի ներկայացման թվականը*		
2		*համարը*	*թվականը*
	Եվրասիական հայտի համարը և ներկայացման թվականը		
	Եվրասիական հայտի հրապարակման համարը և թվականը		
3	51 ***ԱԴՄԴ***		
	5 ***ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ***		
4	71 *Հայտատու (ներ), բնակության կամ գտնվելու վայրի հասցեն*	*հեռախոսի №* , էլեկտրոնային փոստի *հասցեն*	*երկրի ծածկագիրը ըստ ՄՄՀԿ ST.3 ստանդարտի*

	72 Հեղինակ (ներ) (անուն, ազգանուն)	հասցե (բնակության վայրը)	երկրի ծածկագիրը ըստ ՄՄՀԿ ST.3 ստանդարտի
5	Ես(մենք)_____ _____ Անուն, ազգանուն, ստորագրություն (ներ) խնդրում եմ (ենք) արդյունաբերական դիզայնի հայտում կամ արդյունաբերական դիզայնի մասին հրապարակվող տեղեկություններում չհիշատակել ինձ(մեզ) որպես հեղինակ (ներ):		
	Հեղինակի իրավահաջորդը, որը հայտատուին փոխանցել է արտոնագիր ստանալու իրավունքը (նշվում է անունը, ազգանունը կամ անվանումը, հասցեն և երկրի կոդը, ստորագրությունը, թվականը)		
6	74 Հայտատուի (ների) ներկայացուցիչը (ներ)	☐ Արտոնագրային հավատարմատար	☐ Ընդհանուր ներկայացուցիչ	☐Այլ ներկայացուցիչ
	Անուն, ազգանուն	հեռախոսի №		

	Հասցե	*էլեկտր. Փոստի հասցեն*
7	***Հասցե նամակագրության համար (փոստային հասցեն, հասցեատիրոջ անունը, ազգանունը կամ անվանումը)***	☐ *Խնդրում եմ (ենք) նամակագրությունը վարել հայտատուի ներկայացուցչի հասցեով*
	Անուն, ազգանուն *Հասցե*	*հեռախոսի №* *էլեկտր. Փոստի հասցեն*
8	***Ծանուցումների և որոշումների ստացման նախընտրած եղանակը՝*** ☐ *փոստային առաքումով* ☐ *կապի այլ միջոցներով, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով*	
9	**Սույն արդյունաբերական դիզայնի առաջնությունը խնդրում եմ (ենք) սահմանել՝** ☐ *Հայտը Փարիզյան կոնվենցիայի մասնակից կամ այդ կոնվենցիայի մասնակից չհանդիսացող Սևտրի համաշխարհային կազմակերպության անդամ որևէ պետություն ներկայացնելու թվականով (միջազգային առաջնություն) ըստ «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի 29–րդ հոդվածի 2–րդ մասի* ☐ *«Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի 29–րդ հոդվածի 7–րդ մասի համաձայն ավելի վաղ ներկայացված հայտի ներկայացման թվականով (ներքին առաջնություն)* ☐ *«Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի 29–րդ հոդվածի 9–րդ մասի համաձայն սկզբնական (ավելի վաղ ներկայացված) հայտի ներկայացման թվականով, որից առանձնացվել է (զատվել է) հայտը*	
	[31] Սկզբնական (ավելի վաղ ներկայացված) հայտի №	[32] *Խնդրարկվող առաջնության թվականը* / [33] *Երկրի ծածկագիրը ըստ*

			ՄՍՀԿ ST.3 ստանդարտի
	23 «Արդյունաբերական դիզայնի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսում իրի կամ նրա մի մասի արտաքին տեսքի ցուցադրման առաջին օրով (ցուցահանդեսային առաջնություն)		թվականը
10	**Կցվող փաստաթղթերի ցանկը՝**	Թերթերի քանակը մեկ օրինակում	Օրինակների քանակը
	☐ նկարագրությունը		
	☐ իրի, դրա մանրակերտի կամ գծանկարի պատկերների լրակազմը		
	☐ ընդհանուր տեսքի գծագիրը(երը)		
	☐ էրգոնոմիկական սխեման		
	☐ պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը		
	☐ իրի բաղադրանմուշների լրակազմը և դրա քարտը (կոնֆեկցիոն քարտ)		
	☐ առաջին հայտի (երի) վավերացված պատճենը (ները) միջազգային առաջնություն խնդրարկելու դեպքում		
	☐ հայտի թարգմանությունը հայերեն		

	☐ *ներկայացուցչի իրավասությունները հաստատող փաստաթուղթը (լիազորագիր)*		
	☐ *այլ փաստաթղթեր (նշել)*		
	☐ *հայտին կցվում է դրա պատճենը մեքենաընթեռնելի կրիչի վրա*		
11	☐ Խնդրում եմ հետաձգել արդյունաբերական դիզայնի հայտի հրապարակումը		
12	***Ստորագրություն (ներ) և ամսաթիվ*** *(Հայտատուի (ների) կամ նրա ներկայացուցչի (ների) ստորագրությունը վերծանումով)*		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ